


N16



# ԻՐԱՎ

Պատմութեա  
Ամրեաթութեա  
ՀԱՅՈՒ  
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ՕՐ ՏՐԻ

Ա-Բ-Գ

1985



# ԱԼԻՆՈՒ

## ԱՐՄԱՆԱԳԻՐ

### ԿՐՈՎԱԿԱՐ - ԳՐԱԿԱՐ - ԲՈՒԱՍԻՐԱԿԱՐ

ՊԱՇՏՈՆԱԿԹԵՐԻ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐքութեան

ԵՊ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1985

ՅՈՒՆԻՎԵՐ - ՓԻԵՐՆԻՎԵՐ - ԽՎԵՐ

Թիւ 1-2-3

1985

January - February - March

No. 1-2-3

# S I O N


VOL. 59

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem

2001



202-98

10137-86P.

St. James Press, Jerusalem

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. Ի ՍՊԻՐԻ ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐՈՉԸ

## Ս. Է. ԶԱՅՍԻՍ.ԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՀԱՐԵՆ

Յանուն Հօր եւ Ռդույ եւ Հոգույի Արքոյ. Ամէն:

Սիրելի հաւատացեալ զաւակներ մեր,

Անցնում են տարիներ, դարեր, սեռունդներ մահախունապ յաջորդում են իշար, մարդկային կեանքը մշամապէս ալեկոծ, յարաւարձ բաւալուում է ժամանակի հուսանեով, դէպիեր յարափոխուս տողանցում են պատմութեան հորդզնի վրայ, մարդու որոնող ու ստեղծարար միտքը անվերջ բոխչէ է առնում դէպի կատարները իշխան իշազործումների, ու այդ ամէնի վերեւ սիրաբար ոռողում է լոյսը Քրիստոսի, որպէս յաւերժական ճառազարքում՝ սիրոյ, արգարութեան եւ խաղաղութեան ոզու, հոգեւոր իմաս ու բարոյական նպատակ հաղորդելով մարդու կեանքին եւ պատմութեանը:

Սեզ՝ Քրիստոնեաներիս համար, Աստուծոյ Արդին ոչ միայն կատարումն է օրինաց եւ մարգարէից, այլ նաև գրաւականը մարդկանց միջնւ համերաշխութեան եւ բարի կամեցողութեան, մարդկային կեանքի ներդաշնակ, արդար ու խաղաղ գոյավինակի:

Անա թէ ինչու ամէն տարի, երբ աւետում է մեզ բոլորիս, աւշարժին համայն, ծնունդը Աստուծո՞ղու, մենք յուսացեալ սրերով մի անգամ եւս յիշում ենք այս հմարտութիւնները ուժգին կերպով եւ ցնծութեամբ դիմաւում մեծ աւետիոր փրկարար ու խաղաղարար՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յենիյր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Ամէն Սուրբ Ծննդեան աւետիս հոգեկան վերածնունդ է ամէն մի հաւատացեալի համար, երբ նա դիմաւորում է այն հոգեպէս վերանորոգուելու տենչանեով, բօքափած իր մարդկային և կարութիւններն ու անկատարութիւնները:

Ամէն Սուրբ Ծննդեան աւետիս մի նզօր վահան է եւ զէնք յաղբութեան ընդգէմ չարէիք ու մեղքի:

Ամէն Սուրբ Ծննդեան աւետիս գրաւական է զալիք Յարութեան, մահուան խափանումով:

Արդ, սիրելի հաւատաւոր ժողովուրդ, որ ի Հայաստան եւ որ ի սփիւս աշխարհի, աղօքեավ ու երգով հոգեւոր բաց արէք դուները ձեւ սրերի եւ խաղբութեամբ ընդունեցէք մեծ աւետիսը Քրիստոսի նրանք ծննդեան:

Քրիստոսի Սուրբ Ծննդեան աւետիսը պէտք չէ մեզ գտնի անպատճառ վիճակում: Պարտինք, այն, պատրաստ լինել, իմաստուն կոյսերի նման յոյսի վառ նրազներով, հաւուեյարդարը կատարելու մեր անցած կեանքի սրաբների՝ մեր քիսանեկան կեանքում, մեր համայնական ազգային կեանքում, մեր աշխատանիք զայրում: Ս. Յունու տնիկեղծութեամբ կուպատենք մեր ձեռաց զործերը, մեր հայեացքը ուղղած դէպի մեր հոգու խորքերը՝ դառնալով մենք մեր անաշառ դատաւորը, որպէսզի կարող լինենք ցըւելու մեր գիտակցութեան

մեջ կուտակուած անսուզութիւնները եւ սփօրութիւնները, որպէսզի կարող լինենք ձերբազառուելու մեր թերութիւններից եւ վատառողջ մղումներից, որպէսզի կարող լինենք տարանշատել մեր կեանեում՝ էականը երկրորդականից, մնայութ անցողականից, որպէսզի կարող լինենք մեր առօրեայ սին ու խարութիլ խնողութեներից դուրս լոյս աշխարհ թերել, վեր հանել կեանեի մեծ եւմարտութիւնները, ազնիւ իշեանները, մարդու մարդկային դարձնող իշեալները մարդկութեան: Զի Քրիստո պատվամում է մեզ ամէնիս՝ «Առ եղերուի դու կատարեալք ուզէս Հայն ձեր երկրաւու կատարեալ է» (Մատք. Ե 48), այնին կատարեալ, որ «լուսաւուենցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զզործս ձեր բարիս» (Մատք. Ե. 16):

Միւրեկի հաւատացեալներ, աւետարանական այս պատգամների լոյսի ներեւ հաւուեարդարը կատարեցէ ձեր անցեալի կեանեի եւ թիրեացած խոնով դիմաւուեցէ աւետիսը Սուրբ Ծննդեան որպէս վերածնուած էակներ, որպէս «օրուոյ ուրգիններ», միւս պատշաճ նույրուելու բարի ու արդար գործերի կենաւագործման ձեր նոր կեանեի նանապարհին, ձեր անհատական քէ ձեր ընկերային կեանեում:

Մեր Մայր Եկեղեցու ու ազգի զաւակների համար, բարի ու արդար զործ է նաև մեր նույրական աղօրք՝ վասն խաղաղութեան 1915 թոյի մեծ եղեռնին զօնուած հոգինների, համազգային Եղեռն, որի եօրանատևամեակալը մասնաւու հանդիսաւութեամբ պիտի ոգեկոյուի այս տարի Ապրիլ 24ին, քէ Մայր Հայրենիքում եւ քէ ամբողջ նայ սփիւրի տարածի վրայ, համահայկական միասնու թեամբ:

Մեր նանատակաց սուրբ յիշատակի սգեկոյումը՝ քէ սուզի որ է, քէ՝ աղօրքի եւ ուխտի, եւ քէ՝ ազգային միասնութեան ամրապնդումի, այն պայծառ գիտուկոյ թեամբ, որ հայ մողովուրդը մահուամբ մահը կոխելով, վերջին տասն աւետակներին վիշածնուուզի ու ծաղկումի մի նոր դարաշշան կեր տեց իր մայր հոռի վրայ, Արարատի վկեւերին, կեանէ եւ լոյս եւ յոյս բաշխելով նաեւ աշխարհի նանապարհների վրայ ցոււած իր պանդուխ զաւակներին:

Մեր Եկեղեցին ու մեր ժողովուրդը համայն, ու յատկապէս նայասանցինները, մեծ Եղեռնի եօրանատևամեաւուդ տարեկիցը ոգեկոչելու են խաղաղութեան ու ազանուլու թեան պայմաններում՝ իննահասաւա ազգային զիտակութեամբ, հայրենաւու նոր նուանումներով, ստեղծարար աշխատանի նոր լոյսերով, նոր երգերով ու նաեւ նոր յոյսերով զէպի առաւել պայծառ ու արդար մեր աշխարհն:

Մեր ազգի մեծ ողբերգութիւնը օգեկոչելու, հեռո՛ւ մեզանից քենամանի ողին կամ մասծումը ծայրայել արարենների: Մեր միակ հոգեկան մղումն է՝ աղօրել մեր երկու միջիու զոների հոգինների համար ու արդարութիւն հայցել, եւ մասդրել նաև, որ նման ողբերգութիւններ չիրկնուեն երբեք ոչ մի ազգութեան կեանեում: Խոռացու թեան տալ անցեալի ողբերգութիւնները՝ պիտի նաւակէւ էկարացնել, մրազնել մարդկութեան յիշալութիւնը, պիտի նաւակէւ էկարացնել, պիտի նաւակէւ խափանլ եւմարտութիւնը ու խիդդաման անել արդարութեան ձայնը, պիտի նաւակէւ նանապարհների անգրել ապազայ նոր ալէսների ու ցեղասպան ոնիրների:

## ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐք ՀՅՐ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

### ԲԵԹՂԵՀԵՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԵՆ

ԺՈՂՈՎՈՒՐԻ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՍՓԻՌՈՍ ԱՇԽԱՐՀԻ

Ծննդեան այս հրաւապատում գիշերուան մէջ, նորէն կը ննչեն երեսակներու բերնով մարդկութեան տրուած երկնային պատզամն ու աւետիսը՝ ցյերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Յիսուս Աստուծոյ խօսն էր, որ երկինքն երկիր կ'իջնէր, որպէսզի մարդիկ կարենային լսել իր ձայնը եւ տեսնել իր դէմքը, երկնքի լոյսերով ողողուն: Խորհրդաւոր գիշերուան մը մէջ, երկնքի դուռները կը բացուէին, նման Աստուծոյ ըրբներուն, եւ կը ծնէր Խորը Բահը, որ մանկան մը մարմինը առած՝ պիտի լուսնաւ լրյուխ պէս մաքուր կոյսի մը կուրծքին՝ որ ընտեալ տաղաւարն էր Միածնին:

Սյո մեծ իրողութիւնը չէր կրնար իրազործուիլ ո՞չ բնական օրէնքով, ոչ ալ ազատ կամքովը մարդուն, այլ միայն ամենազօր փափաբովիլ Նախա-

Անցեալի ողբերգութիւնների անաշառ դատաստանը, պատմութեան ժառարակների հմաւրտութեան բացայացումը, արդարութեան ձայնի բարձր ու ազատ ժամուռը, ահա՝ ամուր հիմքերը մի նոր աշխարհի կառուցման, ուր անխսիր բոլոր ազգերի զաւակները պիտի հասնեն այն Վրկարար գիտակցութեան, քէ զաւակներն են միեւնոյն Աստուն, քէ բաղաբացիներն են միեւնոյն մարդկային աշխարհի, միեւնոյն երկնակամարի տակ եւ որ բոլորը ունեն միեւնոյն նակատազգիրը: Մարդու նակատազգիր, ազգութիւնների նակատազգիր, աշխարհի նակատազգիր, յետ այսու մանաւանդ, կազմում են մէկ միաձոյլ իրողութիւն, մէկ երամայական, մէկ ապազայ: Այդ գիտակցութեամբ միայն, այս աշխատի մարդիկ պիտի կարողանան միատեղ աղօրել ասելով՝ «Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկիր»: Այն ժամանակ միայն երկիր վրայ պիտի լինի «խաղաղութիւն եւ հանութիւն ի մարդիկ», այն ժամանակ միայն մարդիկ, որպէս խաղաղարաններ, արժանի պիտի լինեն կոչուելու ռողիք Աստուծոյ:

Եղրայրացած ազգութիւնների մեծ ընտանիքում, քող ազատ ու կենսախինն անեն եւ զարգանան մեր վերածնուած ժողովուրդն ու մեր էկն հայրենիքը, յարատել կառուցման ու ծաղկումի ուղիով, միւս երգ ու լրյուվ, խաղաղ, երջանիկ:

Ամենայն Հայոց Մայր Արքու Ս. Էջմիածնից, Սուրբ Ծննդեան մեծ աւետիսով, ողջոյն եւ օրհնութիւն համայն մեր առաջնական եկեղեցուն եւ հաւատացեալ ժողովրդեան:

ՀԱՅԻՆԱԿԱՐ Նոր Տարի: «Քրիստո ծնաւ եւ յայտնեցաւ»: Ա.մէն:

խնամողին: Ասուած կ'ընտէր մաքուր եւ կութիս մը, անոր մէջէն ծնունդ տալու Կենդանի Բանին՝ Խնդիրներն: Աւեմն ո՞վէ մեր Ասուածը, որ այսօր կը ծնի վերաշին, ովկելու իր Երևանային կրակը մեր կային՝ պդուռ եւ զունաս մեր խորհուրդներուն պարգեւելու ստեղծումի սուրբ երաշը:

Մենք չենք կրնա սահմանել Գերազոյնը, առանց սահմանելու մարդը իրեւ պատկերը Գերազոյնին: Եթէ մարդը պատկերն է անտեսանելիին, ուրեմն մարդկային պրիմատին պէտք է նայինք Գերազոյնին, Անօր կութեան ընուհերով եւ զզացումով տալիլու իրմէ իրեն: Ողբերգութիւնը կը սկսի երբ Ասուած կը մեռնի մեր մէջ եւ մարդը կը վերածուի խեւերանի՝ բայց ոչ արժէի, եւ կը դառնայ կեր մահուան:

Մենք այսօր կ'ապրինք եւս դժուար ժամանակի մը մէջ, ուր կործանարար սպասնակինները չարիմին տակաւ կը բազմանան: Խորոնի անհամաձայնութիւններ եւ անհասկացողութիւններ իրենց բեմը կը յարդարեն ամէն օր, մին ի հենուկս միւսին: Տրում անարդարութիւններ կան, որոնք անբուժելի կը մնան, որովհետեւ զալիք այդ արդարութիւնները հզօրներու արգելիչ ձեռներուն մէջն են: Ի վերջոյ, պէտք չէ մոռնալ թէ բաղաքականութիւն ըստածը մաղ մըն է, ժամանակի բեւերոյ շարժող: Մեծ կորնենքը կը մնան մային մէջ, փոքրերը վար կը բափին: Հոս է ահա փոքր ժողովուրդներու ողբերգութիւնը:

Կարեւոր է նախ արմատախիլ ընել պատճառները այս պայշտարին, որ անկարելի կ'ընէ խաղաղութիւնը ոչ միայն ժողովուրդներու մէջ, բայց մանաւանդ հոգիններու խորը: Զի բաւեր ոզբալ կացութիւնը, պէտք է զինուիլ չարի ուժերուն դէմ: Արովինետեւ չարիմին այս պատճառները կու զան նաեւ այն զաղափարախանութիւններէն, որոնք կը տիրապետեն մեր ժամանակին, արտայայտով մեր բաղաքական, տնտեսական եւ ընկերային գրութիւններն ու հասկացողութիւնները:

Կեանի երամայականները փօխուած են, քիսոնեական ոգին եւ դասական մշակոյրը դարերուն՝ որ կը պատմունանէր այդ ոգին, այսօր գեղեցիկ վերջամնացութիւններ կը բռին ըլլալ: Դրամը արծեչափն է դարձեր կեանին, ամէն ինչ առինքնող եւ դիմազեղծող խորհրդաւոր ուժը: Կ'ապրինք անկման մէջ եղող աշխարհի մը մէջ, փեռեկուած՝ անբուժելի հակասութիւններով: Այս վիճակը ակներեւ է ոչ միայն մեր բարերուն մէջ, այլ նաեւ մեր զարուցական, ընկերային եւ բաղաքական կեանի երեսներուն վրայ: Զկայ հոգեկան ապահովութիւն, մարդը կ'ապրի ոնիրի եւ սունեներու աշխարհը: Մարդկութիւնը իրեւ բարոյական հասկացողութիւն հոգեվարէ մը կ'անցնի, նման անօր՝ զար ունեցաւ հին աշխարհի վախնանին, երբ քիսոնեակութիւնը այդ կործանումին կը բերէր կարելի փրկութիւնը, որը կելով արծէններու տախտակը, եւ նիւրէն դուրս հասելով անդնդասուզ ոգեղենը մարգուն:

Այսօր պատկերը աշխարհին աւելի մեծ չափերու վրայ կը կրինէ այդ ողբերգութիւնը: Օրերը որ մերն են, լեցուն են աղմուկով եւ անձկութեամբ: Նոր դիմազեղծող ուժեւ կը միջամտեն մեր կեանին, փօխելով անհատը զանցուածի եւ միտք՝ մետեսայի: Տնտեսական զործոնները հասրիւամեակէ մը ի վեր կը բաժնեն մարդուն հոգեկանը իր միւս մասէն: Եւ տակարին տիրա-

պետման բնազդին ու եսալյաւսութիւնը ազգերու, անասնական անզրութիւններու կ'առաջնորդին մարդը իր բնիկեր մարդուն դէմ, ախտաբանական նկարագիր հագիտելու չափ: Քրիստոնէական մարդկայնականութիւնը, մարդերը համեզբայրութեան զգացումին մէջ զանգելու, փոխարինուած է ցեղային անշատողականութեան, վերբոնիկեցնելով մեր մէջ մէկ կողմէն անասնական բնազդներ եւ միւս կողմէն առաջնորդելով զմեզ կրուներու պատամունինին, ցեղ յղացին ներեւ: Հոգին սուրագասուած է արեան, ձեւի եւ զոյնի մասնայատիւններուն: Պատերազմներու յաճախանին պատճառներէն մին ալ հոգեկան այս խորունի աղացումն է, այնիի անզորք բառով մը՝ ալյասերումը: Նոր աշխարհը, որ ի լինելութեան է, տարբեր արժեկներու կը նայի. մարդէն ու հևմարտութենէն աւելի կը զնահատէ ուժը, ցեղը, մեմնան, զանգուածը: Արգարութիւնը տիրապետուած է ուժէն, մարդը՝ մեմնայէն: Ոհա պատկեր ժամանակին եւ զգայութիւնը մարդուն գրեթէ ամրողական գերութեան: Մեղմելու համար նիւթին, ուժին նևումը մեր հոգինեւէն՝ ինչպէս նաև մեր ուսեւէն, մենք պէտք ունինք մեր օրերու հրամայականներէն տարբեր ուժերու, մարդուն աղարտուած զիմազդիծ վերակազմող սնուցիչներու:

Քրիստոնէական բարոյականի սիստեմ մը չէ եւ չէ եղած բնաւ, այլ կեանի յացք մը, աղրիւ մը, ու բնաւ չի դադրիւ հոսկէն, եւ որ ամենէն առաս հոսած է նախ իր Հիմնագրէն: Քրիստոնէական բարոյականին գերը շատ առուներ է ընդունած իր մէջ անօւն ժամանակի ընթացքին, բայց իր էութիւնը կը մնայ հարազա, բիւրեղ ու մարդկային, որուն հայելիին մէջ պիտի ցոլայ միւս Աստուծոյ պատկերը, կանչելու մարդը եւ նմանութեան:

Լեցուն եւ կատարեալ կեանք մը իննայ բխիլ միայն կատարեալ ունայնէ մը: Տարօրինակ բող չըուի այս հևմարտազանցութիւնը, վասնզի զիւերէն կը ծնին ատղերը, լուրինէն՝ երգը եւ գերեզմանէն՝ կեանիքը:

Այսօր, խօսի ամենազօր ասպետները, որոնք պիտի ներկեն իրենց անզգամութիւնները, ուրիշներու հովելն, ինչէն, կեանէն իրենց յա իտենական ծարաւը պիտի օրինադրէն մորթելու, կողուկտելու, եղեռնական, առ ազակայն բարեկերը, ախորժակները պիտի պատմոնանեն յանուն բարձրագոյն, նորոգ բարոյականներու, յանուն արդարութեան, ժողովրդներու իրաւունին, տիւր ազգերու զիսուն արձակելով անհամար տարեկը մահուան բոշուներուն, ուսմբերը՝ ընդեկերեայ վիւսապներու բերնէն, եւ այս բոլորը՝ խաղաղ անզգածութեամբ եւ անլուր վայրագութեամբ:

Անոնք չեն նախնաւ նիւթին հիմն ծածկուած անհուն ծովը խորհուդին, ուր Աստուծոյ սիրը կը բարախի մէկ եւ նոյն զարկին մէջէն, հասնելու համար անքառութեան: Մարդե՛ր որոնք տռնուազն զուասկէն տարեերուն առեղուածին մէջէն ցոլացող ցուցմունինները, առուսածնեղէն կարգադրութեանց այնեան աներածես՝ պահելու համար զառաւ հաւասարակութիւնը աշխանի երարուսին վրայ: «Ցնծո բիւն աշխարհի ծնաւ», կ'ըսէ մեր եկեղեցւոյ ամենէն զեղեցիկ ազօրիլ այս գիւեր մարմանցաւ բանին համար:

Այդ բանը կը ծնի ոչ թէ, ինչպէս վարդուած ենք ըսիլ, մեր մեղքերու հաւարեանը համար, այլ ուպէսզի ցնծայ մեր աշխարհը; Այսինքն բանի մը

համար, որ երազն է մեր ամբողջ էութեան, կարօսը, պապակը մարդկութեան, այն խաղցր բանը, որ արեւու կարիլէն մինչեւ երջանկութեան տրոփը կ'երևառածքուի եւ որ Հայ Եկեղեցւոյ մեծ աղօրողի ըրբներուն՝ կը վերածուի սրագին աղերսանիք մը, պաղատելով որ փարատին մէզն ու մասախուղը, չանան չարիքն ու յուսանատութիւնը, տարագրուին տագիտապն ու տիրութիւնը մարդոց սիրտերէն եւ վերստին արձագանկէ մեծ զիւերը լեցնող երեսակներու աւետարու ձայնը. «Երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Խաղաղարաններ սիրով կը տանին պայմարը չարին գէմ: Առօն զիտեն խանդիլ պատճառները խռովութեան, որոնց հոգին վեր է պայմարէն եւ զիտէ վերածիլ ճայռերը պարտէզներու եւ կոհակները՝ խաղաղ ջուրերու: Խաղաղութեան կարօս նիշն է եղած դարեւով տառապող մարդկութեան, կեանիք մուր, նեւազին եւ արիւնոս ծփանչներուն դիմաց: Այս նիշը այսօր աւելի խան շացցած եւ բարձրացած է, կեանիք անհամաշափ եւ տրում գնացքին համընթաց եւ դարձեր է սուր եւ ցաւազին աղաղակ մը՝ միլիաններու հոգիէն բարձրացող:

Զեթի կրնար հուատալ մեր օրերու կեղծ մարգարեներուն, որօնք խաղաղութիւն եւ երջանկութիւն կը խոստանան աշխարհին, եւ անիրական երազներով կ'օրօնեն խելակորոյս ամբոխները: Գիտենք թէ մեր օրերու այս անհամերաշխ ուլրեզութիւնը իրական է եւ նոր օրերու խաղաղարանները ի զրւ խժալուր ժխոռով խափանել կը փորձեն աշխարհի տառապանիքն ճայնը հնարամիտ բայց անօգուտ խոստումներով: Ի զուր ժաղաքէներ, ևնիսազէներ եւ բարոյազէներ կը բազմապատկեն իրենց խորեղակցութիւնները եւ դարմաներ կ'առաջարկեն, մահամերձ հիւանդին տառապանիքները երկարածգելու համար միայն:

Ժողովուրդ Հայոց, գուն դարերով, բայց մանաւանդ այսօր, խաղաղութեան ծարաւան ու իդան ես ունեցեր եւ ունիս, ազատութեան տեխանին չափ բուռն եւ երկներին չափ խոռունկ, վասնիք կը հաւատաս թէ սիրոյ եւ խաղաղութեան աշխարհի մէջ միայն կարելի է իրազործել մարդուն երջանկութիւնը:

Գուէ, զաւակներ Հայաստանեայց Եկեղեցւոյ ի սփիւռս աշխարհի, որ կը հաւատամ Աստուծոյ Առջիի մարմնով երենալուն, մեզի հետ միասին այս զիւեր ձեր երկիւղած էութեան խորերէն անզամ մը եւս աղերսեցէք սիրոյ եւ խաղաղութեան Եփանեկն, որ այս զիւեր վերստին կը ծնի մեր հոգիներուն մէջ, որ խաղաղութիւնը լոկ երազ մը չմնայ բարձունիւրու մէջ օրօնուղ, այլ զայ խորտակիլու արեան ալիքները եւ անուշելու կեանիք մռայլը:

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

### ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻՐԱՆԱՆ

Թիւ 394:84

Ա.Յթիլիաս, 13 Դեկտեմբեր 1984

**Ա.ՄԵԽԱՎԱՏԻՒ**

**Տ. Եղիշէ Արքեպոս. Տէրժէրեան**

**Պատրիարք Հայոց Ա. Եռուսաղէմի**

**Եռուսաղէմ**

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Մօս օրէն կը փակուի 1984 տարին եւ ամբողջ աշխարհիր կը պատրաստուի ողջունելու Նոր Տարին, 1985 բուանեանով Ծուռելիս: Հոգեկան կը պատրաստուինք նաեւ ու մանաւանդ ողջունելու մեր Տիրոց եւ Գրկչին Ցիսուսի Քրիստոսի Վրկաբեր Մարգեղութեան խորհուրդը, Ա. Ծննդեան եւ Աստուածայայնուրեան զարմանահրած դրուագին ոգեկոչումով:

Տօնական այս ցնծալից օրերան, Եղբայրական բաղր սիրով կ'ողջունենք Ձեզ եւ ի խորոց սրբի կը մաղթենք որ Նոր Տարին եւ գալիք նոր տարիները Ձեր կեամնին ու զօրծունելութեան մէջ ըլլան բեղմնալից տարիներ՝ առողջուրեան, Եղանակութեան եւ նորանոր իշագործումներու ուրախութեամբը առլցուն:

Ցառագիկայ տարին մասնաւոր նեանակութիւն ունի ամբողջ հայ ժողովուրդին նամար, որովհետեւ 70 ամեայ հանգրուանն է այն ծանր բուականին, երբ փորձուեցաւ վերջ դնել հայ ժողով լուրզի գոյութեան, 1915ի Եղիսանով եւ մէկուկէս միլիոն նահատակներու զոհաբերական մահով: Մեր ուրագին աղօրքն է, որ Քրիստոսի ծննդեան խորհուրդը, որպէս աստուածային սիրոյ ամենացիր նառազայրում տիեզերքի մէջ, դառնայ մեր ժողովուրդին նամար սիրոյ եւ Եղբայրութեան նորոգիչ աղբիւր մը, որպէսզի միութեան ապրումով, միասնական աշխատանիւլ, համահայկական տեսլիքով եւ Քրիստուկալան հաւատարմութեան սկզբունկով կարենալի այդ տարին Աստուծոյ փառքին եւ մեր ժողովուրդի բարիքին ի խնդիր:

Մրուին կ'աղօրենք որ Աստուած Եռուսաղէմի Պատրիարքական Ա.քոռին պարզեւէ բեղմնաւոր զօրծունելութիւն եւ Ձերդ Եղբայրութեան եւ Արքոց Յակոբեանց ուխտեալ Միաբանութեան՝ բաջակորով ոգի, որպէսզի առաւել եւ ծաղկի ևրուստէմի Պատրիարքական Ա.քոռը, ի վայելումն մեր պատելի Հայկակնեան ժողովուրդին:

Մնամք Եղբայրական սիրոյ ողջունիւ

Աղօրակից

Կ. Ա. Բ Ե Գ Ի Ն Բ.

Կարողիկոս Մեծի Տաճն Կիլիկիոյ

**SECRETARIAT OF STATE***From the Vatican, 12 January 1985*

**His Beatitude Yeghishe Derderian,  
Armenian Patriarch of Jerusalem.**

Your Beatitude,

At this season in which we celebrate the Birth of Our Lord you have sent His Holiness Pope John Paul II your greetings and good wishes, thereby increasing his joy and strengthening the bonds of fraternal charity that link you with him.

His Holiness has asked me to thank you most cordially and to send you his own good wishes. He joins in your prayers that all people may hear the message of peace proclaimed by the angels on that holy night and thus learn to live in harmony and peace.

Be sure of my prayers to the Word Incarnate for every heavenly blessing on yourself and your ministry.

Yours sincerely in Christ  
**CARDINAL CASAROLI**  
Secretary of State

**LAMBETH PALACE, LONDON, SE1 7JU  
CHRISTMAS 1984**

**His Beatitude Yeghishe Derderian,  
.Armenian Patriarch of Jerusalem.**

Your Beatitude,

We celebrate the birth of Jesus Christ in a world torn by strife and violence and afflicted by poverty and hunger. The peace Christ came to bring seems as far off as ever.

Yet it is with this world that God identifies himself in love in the Incarnation of his Son. "The Word became flesh and dwelt among us". The belief of the Church that Jesus is truly God and truly man, held no less firmly by Anglicans than by other Christians, is the foundation of our Christian hope that God's peace will overcome all human divisions and oppositions.

For God has identified himself with our fallen human condition in order to redeem us from it. He has taken on himself our human nature in order to share in our suffering, and by suffering to overcome our sinfulness. The Passion and Resurrection of the Incarnate Word is the foundation of our hope, and the inspiration of our common Christian work, for reconciliation and peace.

Part of that work must be for the reconciliation of divided Christians. God calls his Church to demonstrate how, in the Spirit of the Incarnate Lord, men and women of different cultures, different races and different social orders can live together in a peace which is not merely the absence of strife but the positive bond of love.

In sending you and your Church my warmest greetings for the Feast of Christ's Nativity, I pray that our common celebration of the Incarnation of God the Word may bear fruit in continuing progress towards the unity of all Christians, and in still more effective co-operation in pursuit of our common mission to work for reconciliation and peace in God's world.

Your Beatitude's Beloved Brother in Christ,  
**DR. ROBERT RUNCIE**  
Archbishop of Canterbury



## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

**Ամանորի և Ս. Մննդեան տօներուն առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր Կողմէ Եկեղեցւոյ Սրբազն Պետերուն յղուած ևն հետևեալ շնորհաւորական հեռագիրները.**

**Երուսաղէմ, 4 Յունիսար 1985**

**Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղգէն Ա.**

**Կաթողիկոս Ամենայն Հայոց**

**Ս. Էջմիածին**

Նոր Տարւոյ և Ս. Մննդեան տօներուն բարեբաստիկ առիթով, խոնարհաբար կը ներկայացնենք Զերդ Սուրբ Օծութեան մեր և Ս. Յակոպեանց Միաբանութեան սրագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծմէ որ շնորհէ Զեղ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ անսասանութիւն և բարգաւաճում։

**ԵՂԻՃ ԱՐՔԵՊՈ. ՏԵՐՏԻՄԵԱՆ  
Պատրիարք Հայ Երուսաղէմի**



**Երուսաղէմ, 24 Դեկտեմբեր 1984**

**Նորին Սրբութիւն**

**Յովհաննէս - Պօղոս Բ. Պատ**

**Վատիկան**

Ս. Մննդեան և Նոր Տարւոյ բարեբաստիկ առիթներով, յարգանօք կը ներկայացնենք Զերդ Սրբութեան մեր սրագին շնորհաւորութիւնները մաղթելով Զեղ, շարունակական առողջութիւն և Զեր մեծ Եկեղեցին՝ բարգաւաճում։ Թող Ամենակարողն Աստուծած յաջողութեամբ պատկէ Զեր բարի Շանքերն ու ծրագիրներ։

**ԵՂԻՃ ԱՐՔԵՊՈ. ՏԵՐՏԻՄԵԱՆ  
Պատրիարք Հայ Երուսաղէմի**



**Երուսաղէմ, 5 Յունիսար 1985**

**Ն. Ամենապատութիւն Պիմէն**

**Պատրիարք Համայն Ռուսիոյ**

**Մոսկովա**

)

Ս. Մննդեան և Ամանորի առիթներով, կը ներկայացնենք Զեղ մեր եղբայրական և Զերմ շնորհաւորութիւնները, սրագին մաղթանքներով Զերդ Սրբութեան առողջութեան և բարգաւաճ գործունէութեան համար։

**ԵՂԻՃ ԱՐՔԵՊՈ. ՏԵՐՏԻՄԵԱՆ  
Պատրիարք Հայ Երուսաղէմի**

## ՓՈԽԱՆ ԽՄԲԱԴՐԸԿԱՆԻ

### «ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱԳՆԱՊԸ»

Ա.

Քանիցս ըսեր ենք, նորէն կ'ըսենք, թէ Հայ Երուսաղէմը «տագնապ» չունի: Վերոյիշեալ չակերտուած զոյզ բառերը՝ երկու զամեր են, սխուած դագաղին՝ այն մարդուն, եթէ կարելի է տակաւին զայն մարդ կոչել, որ Հայ Երուսաղէմի Միաբանութենէն միաձայնութեամբ վտարուելէ վերջ, փորձեց հայու և եկեղեցականի տնվայել և ամօթապարտ արարքով ամբաստանել Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերաշորհ Տ. Գարեգին Արքեպս. Գաղանճեանը, իրեւ Յորդանանեան լրտես, հրեայ կառավարութեան միջոցաւ զայն Երուսաղէմին վտարել տալու նպատակով:

Հետևաբար Երուսաղէմի Հայոց Միաբանութիւն ոչ թէ «Տագնապ» այլ իր հերոսական ողբերգութիւնը ապրեցաւ, պաշտպանելու իր դարաւոր իրաւունքն ու պատիւը կառավարութեան ոսմնձգութեան դէմ: Այս առիթով նախ Երուսաղէմի Յունաց և Լատինաց զոյզ Պատրիարքները և Ս. Տեղեաց պահապան Կիւսթուոր բողոքեցին այս ապօրինի և սուտ ամբաստանութեան վրայ փորձուած վտարումին դէմ: Յետոյ ամբովչ քրիստոնեայ աշխարհը, Համաշխարհային Եկեղեցական Խորհուրդին սկսեալ, ծառացան այս օրինազանց արարքին դէմ, քրիստոնեայ աշխարհի և մեր զոյութեան դարաւոր իրաւունքները պաշտպանելու համար: Սակայն ի՞նչ եպերելի եղերերգութիւն, Ամերիկայէն կարգ մը ազնուաշուքներ, աւելի ճիշդ՝ ոսկերածներ, որոնք չեն զար մեր ցեղային ազնիւ ժառանգութենէն, միացան վտարուած աւազակին և զրպարտիչներուն, անամօթաբար ստորագրելով Սրբոց Յակոբեանց ժառանգութիւնը ծախելու հօնքրաբը: Ի զուր չէ ըսուած թէ աղքատը եթէ հարստանայ, տակաւին կէս դար աղքատութիւն կը հոտի: Խեղճ մարդեր, որոնք իրենց հողեկան զերութեան մէջ ի վիճակի չեն եղած փոխելու նոյնիսկ իրենց մորթը, զայն ընելով աւելի խարզած իրենց զործառութիւններուն և հաշիներուն մէջ: Ասոնց կարգին, Ս. Յակոբի իրաւունքը ծախելու զործին միացան ազնուաշուք կոչուածներու մեղքերու բեռնակիրները և մէկ երկու անարժան Միաբաններ, որոնց անունները չենք ուզեր յիշել հոս, չպղծելու մեր սրբազան պայքարի ողին, քով քովի եկան հարուածելու: Հայոց դարաւոր իրաւունքը Երուսաղէմի մէջ, պաշտպանելու զող մը և մէջնեայ մը: Միակ հայ Եկեղեցականը, որ բողոքեց այս վտանգաւոր արարքին դէմ, նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կիլիկիոյ Մեծի Տանն կաթողիկոսը եղաւ:

Ո՞ւր էին մեր Եկեղեցւոյ պատմուճանաւոր իշխանները և անոնց պատմուճանին ներքեւ ծուարած փիլոնակիրներու մեծ մասը, որոնք տարիներով այս

սրբազան Հաստատութեան բարիքը վայելեցին : Հոս անցուցին իրենց ոսկեշող պատանութիւնը և երիտասարդութիւնը : Լեցուցին իրենց հոգին երազներով և յառաջադրութիւններով : Պատանութիւնը երազ է, աղօթք է և սլացք : Այդ երազներուն և աղօթքներուն մէջէն կազմուեցան Միաբանի և եկեղեցականի իրենց նկարագիրները և զէրը այս Տանը և Հայ Եկեղեցւոյ հանդէպ : Դուք բոլորդ ալ այն օրերուն ուժատեցիք ձեր կեանքի զինով ծառայելու և պաշտպանելու այս Հաստատութիւնը : Ա՞զ փշեց ձեր հոգին, պէտք չունէիք ձեր պպտիկութեան վրէժը լուծելու կամ ձեր տարիներէ ի վեր այս Հաստատութեան շժառայելու ամօթը անզամ մը ևս յիշելով համար Ա՞նչ պէտք ունէիք անզամ մը ևս ծախելու ձեք հոգին եօթ անզամ փոշիացած կուսութիւնը :

Այսօր, կը հաւատամ, թէ Կ'ողքան ձեր վրայ այս նուիրական Տանը Երախտապարտ Նախնիքնները, որոնք ըրին իրենց կարելին, ի զին արեան և արցունքի Ս. Երկրին մէջ մեզի ապահովելու և կտակելու նուիրական այս ժառանգութիւնը, որ հակառակ ժամանակի ընթացքին ենթարկուած փոփոխութիւններու + տակաւելին կընայ մեզի Երախտապարտութեան հրաւիրել անոնց սուրբ յիշաւակին :

Հայ Երուսաղէմի պաշտպանութիւնը, տիեզերական Երուսաղէմի մէջ դարերով մեր ազգասիրութեան և հոգեոր զինուորութեան զերագոյն պարտականութիւնն է Եղած : Այսօր ագաւել քան Երբեք պէտք է կիտակցինք մեր այդ գերին, որովհետեւ նոր օրերու հեռապատճերը Սուրբ Քաղաքին կը մնայ անստոյդ : Դժնդակ օրեր ճամբայ Ելած են դէպի մեր հաւաքական զոյութեան ապառնին : Մեր Եկեղեցին, մեր լեզուի և նուիրական սրբութիւններու աննահանջ, այլամերժ և վայրագ պաշտամունքը՝ միակ դրօշակն է մեր բախտաւոր համախմբումին : Ազոյութեան : Հեղատես իմաստութեամբ պէտք է ջանանք իշեկի մեր ապազային ձեռնունայն չմնալու մեզի ապառնացող վտանգին առջն : Սակայն անայլայլ է մեր հաւատքը, որուն հրաշքը դարերէ ի վեր կատարուած է այս նուիրական յարկին մէջ : Հըտչը մը չէ միթէ զարմանալի այն իրողութիւնը, որով ճակատագրին գէմ ամէն օր մաքառող այս ժողովուրդը, դարէ դար ամէն կողմէ վերջունուած, կրցած է սակայն պահել հոս՝ վշտին սրբութիւնը և յօյսին զօրութիւնը խորհրդաւորող այս սուրբ Երկրին մէջ, իր դերն ու դիրքը հաւասար զիծի վրայ պահելով, աշխարհի ամենէն հզօր և յառաջադէմ ազգերու կարդին : Իմաստութեան, բայց մանաւանդ աննկուն քաջութեան այս ողին, որով անտէր է կանգներ անթիւ պայքարներու մէջ, պաշտպաներ իր նուիրական իրաւունքները, զորս մեր ժողովուրդի հաւատքի զօրութիւնը ստացեր է քրիստոնէական այս տիեզերական կրօնաստանին մէջ :

Ս. Տեղեաց մէջ Հայ Եկեղեցւոյ և ժողովուրդի ունեցած ժառանգութիւնը նիւթական փառք մը չէ միայն, հակառակ որ անոր իւրաքանչիւր քարը, գարերու ընթացքին, մեր ժողովուրդին արժած է ի՛ ծանրութեամբ ոսկի : Ինչո՞վ, հետեարար, կարելի է փոխարինել կրօնական շերմեռանդութեան այն ողին, որուն հաստատուն սուրբ ծառին արմատները միրճուած կը մնանին այն հողին մէջ, որուն վրայ մեր Տէրը իր Երկրաւոր առաքելութեան տարիները ապրեցաւ : Միոնի բարձունքին թառած Ս. Յակոբանց հոգեոր մենաստանը

Քրիստոնեայ Եկեղեցւոյ առաջին աթոռն է, պատուանդանը մեր Տիրոջ հոգեոր և աշխարհիկ իշխանութեան։ Արինով և արցունքով ուռած և փրփրած զարերու ընթացքին, Հայ Եկեղեցւոյ Սաղիմական այս Աթոռը մնացած է հաստատուն և անսասան չնորհիւ իր տիրանուէր և ուխտապահ զաւակներուն, որոնք իրեւ պահապաններ Աթոռը շրջապատող Սուրբ Տեղեաց և անոնց մէջ մեր ունեցած ազգային իրաւունքներուն, ըրեր են իրենց լաւագոյնը, միշտ վառ պահելով հոգիներու աշտանակին վրայ Աստուծոյ պաշտամունքին լոյսը։

Աւելին, Ս. Յակորեանց ժառանգութիւնը վեհաշուք կազնի մըն է, որ գարերով իր գագաթը միմեր է ամպերու մէջ և մեր պահամութեան խորը և իր հոգանին տարածեր մեր ժողովուրդին վրայ ։ Աւխտի բարձունք մըս որուն չնորհաբաշխումին Եկած են գարերով, հիւանդաներ, ախտաժէտաներ, խոլիք, համբեր, աւխտաւորներ, հաւատք և ոյժ հայցելու, սփոփելու իրենց թափծու հոգիները։ Պատիք թելագրէի որ անմիտ հովերէն պաղ առած եւ անկողին քրցող մեր քարեկարգիւներն ալ զային՝ բուժում խնդրելու իրենց տարիներու հիւանդութեան։

Տակաւին, Ս. Յակորեանց այս Աթոռը, իրեւ նուիրական մէկ ճիւղը Հայ Եկեղեցւոյ և առաջին պատուանդանը մեր Տիրոջ հոգեոր իշխանութեան սրբագան այս քարաքին մէջ, գարերով իրենց քաշած է հոգիները շերմեռանդ հաւատացեալներու ։ Հայաստան աշխարհի բոլոր հուներէն ուխտաւորութեան ալիքները, ծովու ալիքներու պէս, իրենց ջերմեռանդ համրոյներով սրբեր ու մաքրեր են քարերը այս Հաստատութեան, գնելով իրենց հոգին պատկերը աշդ քարերուն վրայ և նուիրաբերման գանձերը անոր ծոցին մէջ։

Սուրբ Երկրի մէջ, Երուասաղէմի վարդապետը ամէն քանէ առաջ վանական զինուոր մըն է, որոց պարտաւորութիւններով, որոնց մէկ կարիոր մասը նպաստն է Ս. Տեղեաց իրաւանց պաշտպանութեան։ Ս. Յակորայ բեմէն կարգ առնող ամէն վարդապետ իր աւխտին մէջ կարեոր տեղ կու տայ այս պարտին։ Երուասաղէմի Առաքելական Աթոռը, իրեւ երկրորդ կարևոր սրբավայրը Հայ Եկեղեցւոյ, պահած է գարերով իր տարօրէն ամուր կշիռը Հայ ժողովուրդի սրտին ինչպէս մտքին վրայ, մալով մեր արտասահմանեան կրօնական ամենէն շերմ և կենդանի կոռւանը և ի մոտի պէտք ենք ունենալ որ Հայ ժողովուրդը Հայրեքն դուրս ոչ միայն այսօր, այլ նոյնիսկ անցեալի մէջ չէ ունեցած սրբավայր մը, որ կարենար հաւասարիլ Երուասաղէմի Ս. Յակորեանց վանքին, որ քրիստոնէութեան առաջին եպիսկոպոսապետին՝ Յակորոս Տեղանեղօր պատմական Աթոռն է հաստատուած հոն՝ ուր առաջին անզամ մեր Տէրը դրաւ իր արքայական զանը։ Պատմութեան փոթորիկները չեն կրցած խախտել անոր պատուանդանը, որովհետեւ անիկա սուրբ է և կը նայի յաւիտենականութեան։

Տրամայեղացորէն, շանթերու, փոթորիկներու, ոէշ օրերու, ամէն կարգի թշնամութեանց դէմ յաղթապանծ այս կազնին ի տես, մարդեր կան, որոնք փոխան հրճուելու, սիրա կը պատրին և կաղնին, զոր Հայուն իրական աստուածարեալները անկեր են Սիրոնի բարձունքին, որ բողբջեր է Հայ ժողովուրդի սրտին մէջ, աճեր է Հայոց պատմութեան ամենէն մութ օրերուն, եօթնակարան գանձներէն դաս առնելու պէտք չունի, կան յաւանուսներ, որոնք չես գիտեր իրենց ո՞ր մխրագործութեան համար, կը պոռան թէ իրենք ալ բաւած

են Հայ ժողովուրդի ծոցին մէջ և կը փորձեն կաղնիին հետ չափուիլ իրենց հասակովը, որ սխտորի տօւնվի մը չափ ալ երկարած չէ, հակառակ տարիներու իրենց բաշխուած բարիքին։ Էսինք այս տիսմարներուն, որոնք առանց իրենց զամբիւղին մէջ կտոր մը հաց ունենալու, ճամբայ ելած են նոր նուաճումներու, թէ երուսաղէմը «տազնապ» չունի, հոն կրակ չկայ, հրշէլչներու կարիք չկայ, այլ ազատարար լուղորդներու, ջուր նետուած Յովանը, այս պարագային՝ դիմակաւորը դուրս հանելու, երուսաղէմի դէմ պայքարի մտած այս թշուառամբտները, արդէն իսկ ձախողելու դատապարտուած իրենց խոտոր արարքներով, թէ կարծեն թէ պիտի կրնան ջուրը զինիի, սուտը ճշմարտութեան փոխել։ Այս անսպանակ կզակները չեն անդրադառնար որ նուիրական այս ժառանգութեան սպասաւորները, ովքեր ալ կոչուին անոնք, միակ ուխտ մը և պարտականութիւն մը ունին, ընելու իրենց կարելին, Աստուծոյ փառքին և ազգի պատուին համար մեր նախնիքներէն մեզի ժառանգ մնացած սրբազն այս ծունը պահելու բոլոր ներքին և արտաքին սպառնալիքներէն։

Մեր խորին համոզումն է, որ Հաստատութեան ողիին թշնամիներն են բոլոր անոնք՝ որոնք կը փորձեն մրոտել այս փառաւոր ժառանգութիւնը և անոր արի արանց սպասաւորները, իսկ աւելի թշուառամբտները անոնք՝ որոնք ներքին խաղաղութիւնը վրդովող այդպիսի վիճակ մը չեղած պարագային, ինչպէս է այժմ, իրենց յատուկ զգացումներէ մղուած, կ'ուզեն բոլորովին հակառակը հաւատացնել հանրային զգացումին։ Սակայն ի վերջոյ լիրբերուն հանդուրժելու համբերութիւնը, նոյնիսկ սուրբքերու մօտ, չափ մը ունի, հակառակ իրենց հոգիներու մթերքին։ Մեզը, նոյնիսկ շղարշով զգեստաւոր, պարտի իր կշիռը ունենալ խղճմտանքի նժարին։ Աւղեղի տեղ մաղձամաշկ և մարմի տեղ մեր ցեղային տիպարը եղծող շուքերուն դժուար է զգաստանալ. անոնք հողէ պտուկներու նման տակաւին շատ պիտի եփին, ճաթելէ առաջ։

Հանրային կեանքը և զերքի այս ողբերգութիւնները, որոնք ոչինչ ունին իրենց սեփական, որոնք միամիտներու կը ծախսն ապրանքներ՝ որոնց զինը չեն վճարած, կը խօսին արքէքներու մասին, որոնց պաշտպանութեան համար չեն տուած կաթիլ մը արիւն։ Կուսակցութեան անուն կրողներ՝ զորս կը ճանշնանք իրենց անգործութենէն, որոնք ճպաւուներու նման հարուստներու շուրջ կը դառնան, կը փորձեն իրենց բազմաթիւ վրիպումներու կարգին, ըլլալ հանրային գործունէութեան ախոյեան, հանրային վիրքի առաքեալ։ Հանրաքուէի դիմելու ձևով, կոչ կ'ընեն կաթողիկոսին, վսեմաշուքներուն, որ իրենց հետ ըլլան քանդելու նոր ծրովադան, երուսաղէմի Պատրիարքութիւնը։ Կը ցաւինք իրենց զորիխներէն վիրաւոր այս խելզ Աթիլէսներուն վրայւ ի վերջոյ, հաւնոցի այս սիրամարզները պէտք է զիտնան իրենց տարիներու եթէ ոչ փորձառութենէն։ զնէ փորձանքներէն, թէ զուր կ'անցնի ամէն խարկանք և յաւակնութիւն, և կը մնայ միայն վարտիքին խոնչանը, իբրև նշան անայրութեան և թշուառութեան։

Շուրջ երեսուն տարիներ առաջ, նորէն աղմուկ կար երուսաղէմի մէջն ու շուրջը, կը վազէին, կը ճշային ձառադէմ և աղմաթաթաւ մարդեր, երկար ու կարճ մօրուքներով, փողոցներուն մէջէն սրբազն քաղաքին, ափ առնելով

պետական պաշտօնատուները, երկարելով իրենց ձեռքերն ու գունչերը մինչև Ամերիկա, մինչև Ս. Էջմիածին և Կը վազէին սպառնացայտ, վրէժխնդիր, նախանձավառ, յարձակելու մարդու մը դէմ՝ որ Աթոռին նեղ օրերուն, 1949-1956, ըրած էր իր կարելին, պաշտպանելու Երուսաղէմի Աթոռը քաղաքական և տնտեսական մարզերուն մէջ, տեղ բանալու անորոշելի և մտքով անհաստատ մարդու մը: Բոլորու ալ զիտենք թէ ինչ եղաւ արդիւնքը այս տրտմայելդ և վայրերան թշուառամիտներուն:

Այսօր նորէն, գժբախտաբար, սրուած են ակուները պաշտպանելու գող մը, ստախօս մը, լիբր մը, որ չէ ուզած հսազանդիլ նոյնիսկ նորին Ս. Օծութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսի զոյզ հրահանգներուն, հեռանալու համար Երուսաղէմին, ապաւինած Մուկեանի մը և անոր անդիմազիծ աղջկան պաշտպանութեան: (Այս սիրաբանական տրամային պատմութիւնը յետոյ, իր պատկերազ գունազեղութեամբ, Երուսաղէմին մինչև Բեթրա: ) Տակաւին պիտի խօսինք, այս Խմբագրականներու շարքի ընթացքին, մարդերու մասին՝ որոնք կը փորձեն չնշանեղ ընել ճշմարտութիւնը: Պատճառոր այս Յուղայականութեան՝ Երևուն արծարը, որ, ինչպէս ըսած ենք, լայնափեռեկ բացած է ազտոտ բերանները թրքաբարոյ Պողոսեաններուն և կուսակցական կարգ մը մուրացկաններու: Մեզի ծանօթ են նիւթին այդ զերիները, որոնք պատրաստ են գիւրութեամբ դաշնակցելու ամէն չարիքի, շատցնելու հտմար մետաղի այդ կտորները իրենց պարապ հողիներուն և լայն զրավաններուն մէջ: Իր անձը անամօթաբար ծախողին ճշգրտօրէն որակող բառ մը չունինք մեր լեզուին մէջ: Թուրքերը ունին զայն, բայց կը դժուարանանք հոս զբիլու:

Սիրելի «Ըներ» և Արեւաններ, մեր մամուլի պատմութեան մէջ տակաւին չեն եղած խմբագիրներ, պղծաշուրթն և ձառագէմ, զարշաբան և զազրելի, աղքասուն և խեռաբարոյ, տուած ինքզինքնուն այսքան վայրահաճ ազատութիւն, մրոտելու համար անձեր, հսարուած սուտերու վրայ, հարկադրուած ստամոքսի թելագրանքներէն: Ի վերջոյ պէտք է ապրիլ, նոյնիսկ խողերու առջև նետուած եղջիւրէն, նման Աւետարանի Անառակին: Այս թշուառամիտները, ծանօթ մեր ժողովուրդի տկարութիւններուն, որ սուտեր կլելու և պղտոր ջուրերէն խմելու յօժարածուութիւնը ունի յաճախ, անխղճօրէն կը փէլն իրենց տճկորը, նուազելով ամօթալի եղանակներ:

«Զէրն չէին յայտ առնէրս, երբ կը զրէր Ե. դարու մեր անմահ եզնիկ կողբացի մեծանուն վարդապետը, մտքէն կ'անցընէ՞ր արգեօք որ մը իր դիալէկտիկայով պիտի պատկերառորէր Միքամանի կոչուած հրանդութեան տեսութիւնը, որ ուրիշ բան չէ բայց ախտաբանական ձգտում մը, զիտակցական և կամովին սուտեր յերիւրելու: Միքամոնը կը հաւատայ աւելի իր հնարած սուտերուն քան իրականութեան: Մօրուսութեան զացող այս կարդի ստարանները տարօրինակ հաճոյք մը կը զգան հէքիաթներ նիւթելով: Երկակայսւթիւնը թել կու տայ, բերանն ալ կը մանէ, իսկ իրենք ալ կը յափշտակուին իրենց հիւսած սուտերովի, նոյնիսկ առանց զիտնալու թէ անոնցմէ ո՞րը ճիշդ է և որը սուտ:

Արգահատելիներ, որովհետեւ զաղափարի և կեանքի կոիւին մէջ մաքա-

և ելէ առաջ յաղթուղներ եղան և զիտեն անոնք ասիկա, և այժմ անպատիւ ձեռնարկներու կը դիմեն, անանկացած ոչ թէ վաճառականներու, որովհետեւ իրենց կեանքին մէջ վաճառելու բան մը չեն ունեցած, եղկելիութենէն զատ, այլ ձեռնածուներու նման, որոնք իրենց բախտը ուրիշներէն կը սպասեն, իու կամակատար ըլլալէ վերջ անոնց զթասրառութեան, որ Եկեղեցւոյ պնակին մէջ լումա մը գնելէ աւելի ծախու առած է իրենց ամօթլը:

Իրենց անկարողութեան տրտում զիտակցութիւնը չ'ընկճեր զիրենք: Աւ րիշ ի՞նչ կը մնայ իրենց ընելու, եթէ ոչ արտաքնապէս խրոխտանալ իրենց խեղճութեանը մէջ, գունաթափ և զազրելի: Անոնց սորվածը կեանքէն եղած է պնակալէզութիւն, շահախնդիր ու չնական, գուեհիկ կեղծաւորութիւններու դիւրին և շահաբեր կարծուած արհեստը: Ուզեցին մտքի մարդեր, հերոսներ և առաջնորդներ ըլլալ, բայց մնացին կէս ճամրան:

Մենք մեր այս արտայայտութիւններուն մէջ չունինք անձնական շահախնդիր նկատումներ, վերապահումներ, վախկոտ ու վատ զգուշաւորութիւններ, զերծ մանաւանդ խժուուժ, հասարակ տեղիքներէն և արծաթի ձայնէն զղիսած զրչակներու անորակելի և ստրուկ սովիեստութիւններէն, չըսելու համար լրբարանութիւններէն: Պիտի չվարանինք արդարութեան և մաքրագործումի ճամբուն մէջ ըլլալու վճռական և անթօլլատու՝ բոլոր որձեկզութիւններու նկատմամբ: Որոշեր ենք մերկացնել բոլոր ամբարիշտները, մորթագերծ լնել Փյշտացինները, դրամի կաւատները, Սիմոնականները, տակաւին ազնուաչուք կարծուածները, որպէսզի երեան անոնք մեր ժողովուրդի պղտոր աշբերուն, որպէսզի ամրապնդուի կրօնական և ազգային առաքինութիւններու խախուտ հաւատարմութիւնը:

Պիտի մտրակենք իրենց ոսկեզօծ պատմուճաններուն մէջ սոնքացող և յղացած ազնուականները, այսինքն մամոնայի բեռնակիրները, խանզարելու համար անոնց Փշացող մարտողութիւնը: Պիտի չխնայենք կեղծիքի և սուտի արհեստաւորներուն, յարգուած խաչազողներուն, ամբոխին միամիտ ընազդները շահազործող դիմակաւորներուն, մութին մէջ պահուըտող նենգութեան և սագրանքի միջնորդներուն:

Մեր Խմբազրականներու այս շարքը պիտի անդրադառնայ նոյնպէս 1955ի ողբերգութեան, որ մեր ժողովուրդի հողին և Հայ Եկեղեցին երկու մասերու բաժնեց: Պիտի խօսինք անկէ անմիջապէս վերջ եղող տրտմայեղծութեան, 8իրան-Եղիշէի պայքարի մասին, որ իր թափը առաւ վերոյիշեալ թուականին, որովհետեւ զիխաւոր զերակատարները նոյն անձերն էին: Ըսի թէ պիտի չխնայեմ ոչ ոքի, որովհետև ազգի և Եկեղեցիի շահը վեր է ամէն բանէ:

6.

(Եարումակելի՝ 1)

## ՓՈԽԱՌԱՆ ԽՄԲԲԱԳՐԸԿԱՆԻ

### ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅՑ

Բ.

#### ԼՈՒՐ ՕՐԵՐՈՒ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Մէկէ շատ աւելի են անշուշտ օգտագործելի թելադրութիւնները, զրս կը պարունակէ Եկեղեցական Բարեկարգութեան Զեկուցումը։ Բայց այդպիսի ներէն չէ ապահովաբար այն՝ որ կը վերաբերի լուր օրերու ժամասացութեան խնդրոյն։

Այս մասին կ'ըսուի հոն, ծիսական-արարողական խնդիրներէն առաջին ժամակարգութեան զլուխին մէջ, իրբն Կովկասահայ հոգիորականներու համագումարին կողմէ որոշուած առաջարկ։ ԾՂեկավարուելով միօրինակութեան և Առաքելական Եկեղեցու պարզութեան սկզբունքներով՝ վերացնել լուր օրերու ժամասացութիւնները, ինչպէս եղել է Քրիստոնէական Եկեղեցու մէջ մինչև երրորդ դարու վերջերը։

Մեզի կը թուի թէ այս պարբերութեան վերջին մասը, որ նոդ դրուած է իրբն առաջարկին փաստը կամ հիմք, բոլորովին ուղիղ չէ և երկրորդ դարու սկիզբէն, այսինքն Տրայիանոսի ատենէն, ըստ մանաց՝ ներռնի ժամանակէն նոյնիսկ, այսինքն Առաջին դարու երկրորդ հէակն սկսեալ մինչև Գ. դարու վերջերը, հայածանքի սաստկութեան տարիներուն մասնաւրապէս և Հռովմէական հայսրութեան սահմաններէն ներս յատկապէս, քրիստոնէանները լուր օրերուն չկրցան հրապարակային կամ հաւաքական պաշտամունք կատարել և բաւականացան նարաթէն իիրակի լուսցող զիշերի աղօթաժողովներով, ոչ թէ սառաքելական եկեղեցու պարզութեան սկզբունքով, այլ միմիայն իրբն հետեանք սարսափին հարկադրած զգուշութեան։

Բուն առաքելական օրերուն, այսինքն երբ դեռ կենդանի էին Յիսուսի աշակերտները, առօրին պաշտամունքը չէր կրնար դոյութիւն ունեցած շրջակ Առաքելանները, երկիրւուած Հրեաներ ամէնքն ալ, որոնք առաջին հաւատացեալներուն հետ ամէն որ մասնակցեր էին երուսալէմի մէջ տաճարի պաշտամունքին (Դորձք, Բ. 46, Ե. 43), և երուսալէմէ դուրս ալ, ինչպէս Պողոս, հետամուս եղած էին յաճախակի և նոյնիսկ հանճապազօք պաշտամունքի (Դորձք, Ժ. 7, Ժ. 9), անկարելի էր որ չկազմէին Քրիստոնէական նոր պաշտամունք մը, աղօթքի մասերով և ժամերով նման հրէականին, որուն ընտելացած էին հոգեպէս։

Յայտնի է Թալմուտով և Յովսէպոսի տեղեկութիւններով թէ, մեր Առաջին դարուն և Քրիստոսի օրով, Հրէից պաշտամունքը ընդհանութեր առամամբ կը բաղկանար Սաղմոսէ, ընթերցուածէ, օրնութենէ, զոհէ և քահանային աղօթքէն։ Եաբթուան մէն մի օրը ունէր իրեն սեպական սաղմոս մը, ընթերցուածներուն մէջ ամենէն սրտադրաւն էր երկրորդ Օրինաց Զ. 4ը, և լուր, Խորայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է . . . , իրը իրենց հաւատոյ հանդանակը բայց անոնք կ'առնուէին նաև Օրէնքէն, որ Հնդամատեանն էր, և Մարդարէնէրէն։

Կը յաջորդէք մեկնաբանութիւն մը. տեսակ մը քարոզ, կը կարդացուէին օրհնութիւններ, մասնաւորաբար Մովսէսինը (Սլից ժԵ.), ապա աղօթք: Ամէնօրեայ էր պաշտամունքը, և կը կատարուէր առաւօտուն, միջօրէին և երեկոյին. ընդհանրապէս այս վերջին պահուն էր նաև որ տեղի կ'ունենար գոհը, երբ ժողովուրդը կ'երգէր ձև. Սադմոսը. «Աւղիդ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո, Տէր, համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի»:

Արդ, զրեթէ այս կազմին վրայ էր որ ձևուեցաւ քրիստոնէական առաջին պաշտամունքն ալ: Զանք եղաւ Աւետարանական իմացումներու և քրիստոնէական բարբերու պատշաճեցնել պաշտամունքային այն կերպերը, զորս ա՛յնքան սրտեռանդն բարեպաշտութեամբ կատարեր էին մինչև այն տաճարին և ժողովրդանոցներուն մէջ: — կը տեսնենք Գործք Առաքելոցի Ի. 7 և Ա. Կորնթ. Ժ. 26, 28, 35, 40 համարներուն մէջ, որ կանուխ սկսած է արդէն հրապարակային պաշտամունքը. «Եւ մինչդեռ ծողովնեալ էտք բեկաննել զհացն»: «Յորժամ ի մի վայր ծողովիցինք, իւրաքանչիւր ոք ի ձէնչ եթէ սաղմոս ունիցի, եթէ վարդապետութիւն ունիցի ... ամենայն ինչ ի շինած լինիցի»: — կը տեսնենք նաև, ինչ որ շատ որոշ կ'երևի եփես. Ե. 19, Կողոս. Գ. 16, Ա. Տիմ. Գ. 13 և այլ հատուածներու մէջ, թէ քրիստոնէական այդ պաշտամունքին տարրերն են. «Սաղմոսք», «Յօհնութիւնք», «Երզգե հոգկորք», «Ընթերցուած», «Միխթարութիւն», «Վարդապետութիւն», Կարգ մը եկեղեցական հին հայրերու (իզնատիս, Ամբրոսիոս) վկայութիւններէն ևս կը հասկցուի թէ պաշտամունքի այդ տարրերուն վրայ յաճախ կ'աւելցուէին նաև ընդհանուր կարիքներու վերաբերեալ հայցուածներ. սովորութիւն՝ որուն կ'ակնարկուի թերես Ա. Տիմ. Բ. 2 համարին մէջ, ուր կ'ըսուի. «Աղաչեմ նախ քան գամենայն առանել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս գասն ամենայն մարդկան, մասնաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց, զի խաղաղութեամբ և հաւատութեամբ վ սրեսց ուք զիեանս մեր և ամենայն աստուածպաշտութեամբ», ինչ որ կը ցուցնէ թէ քրիստոնէական ժամակարգութիւնը Ա. դարուերկորդ կիսուն սկիզբն իսկ, 65ին, որ թուականն է Ա. Տիմ. Թուղթին զրութեան, հասած էր արդէն զգալի զարգացման կէտի մը:

Գալով այդ շրջանին մէջ քրիստոնէական նորակազմ պաշտամունքին ամենօրեայ լինելուն, ատիկա ոչ միայն կը մակարերուի ի յառաջազունէ, այսինքն խորհեղով թէ հրէականնէն պէտք է առնուած ըլլան ոչ միայն տարրերը, այլ նաև հանապազորդութեան պայմանը, և այս՝ այնպիսի կազմակերպութեան մը մէջ, որուն մեծագյն վաստակաւորներէն մին կը պատուիրէր «Եղօթից ստէպ կացէք», այլ նաև կը հաստատուի Գործք Առաքելոցի Բ. 43էն, ուր կ'ըսուի նորադարձ հաւատացեալներուն համար. «Էին հանապազորդեալ վարդապետութեան առաքելոցն և հաղորդութեան և բեկանելոյ հացին և աղօթիցն», և յաջորդ՝ 46րդ համարէն, ուր կ'ըսուի. «Հանապազօք կանխեալ միաբանութեամբ ի տաճարն և առտնին բեկանէին զհացն, և առնուին կերակուր ուրախութեամբ և միամը տութեամբ սրտի, օրնէին զնստուած, և ունէին չնորհս առ ամենայն ժողովուրդն»: ինչ որ ըսել է թէ՝ ամէն օր՝ Հրէութենէն բաժնուելնէն առաջ ալ և յետոյ, հասարակաց պաշտամունք կը կատարէին քրիստոնէաբար, կ'աղօթէին,

կը հաղորդուէին և սիրոյ ճաշը կ'ուտէին։ Նոյն բանն է որ կը հասկցուի դարձեալ Գործքի ԺԹ։ Զէն, ուր կը պատմուի թէ երբ Պօղոս Եփեսոսի ժողովրդանոյին մէջ երեք ամիս շարունակ կը քարոզէր և Հրեաները ի վերջոյ սկսան խծրծանքի նիւթեր հանել իր խօսքերէն, իրեն աշակերտածները բաժնեց անոնցմէ, և Շնանապազօր խօսէր ի դիւանին Ցիւրանեայ ուրումն, և այս եղեկ երկեամ միս։

Կատարելապէս իրաւացի պիտի ըլլար ընդունիլ նոյնպէս թէ հրէականին համեմատ պէտք է կազմուած ըլլայ աղօթաֆամերու զրաւթիւնն ալ, առաւօտի, միջօրէի և երեկոյի բաժանումներով, Բացորոշ է այս մասին Վկարդապետութիւն առաքելոցի ակնարկութիւնը։ Թէ ներկայ քննադատութիւնը Դ. Դարու վերջերուն կը գնէ այս զրբին խմբազրութեան այժմեան ձեր, բայց կարելի չէ անարժէք նկատել անոր այդ վկայութիւնը՝ իրեն արձագանդը գէտ հին աւանդութեան մը, երբ յիշենք մանաւանդ թէ այդ մտօք ակնարկութիւններ կան Առաքելոց աշակերտ կեմեէս Հռովմայեցիէ 96ին զրուած Առ Կորնթացիս Թուրթին մէջ, ուր յստակօրէն կը զատորոշուի Ս. Պատարազի ժամը՝ միւս աղօթքներու պահերէն, ինչպէս նաև կրտսերն Պինիոսի առ Տրայիանոս կայսր ծանօթ նամակին մէջ, որ զրուած պէտք է ըլլայ 104-112 թուին, և որուն մէջ կը յիշուի արդարութէ քրիստոնեաները առաւօտեան լուսաբացին անդամ մը պաշտամունք կատարելէ և մեկնելէ վերջ՝ յետոյ նորէն կը հաւաքուին, ևայլն։

Իսկ եթէ ուզուի ընդունիլ, ինչպէս կը միտին խօրհիլ շատեր, թէ կեմէս Հռովմայեցիի և Պինիոսի յիշատակութիւնները կիրակի օրուան համար են մասնաւորապէս, և թէ, ինչպէս Ա. դարու վերջերը կամ Բ. ին սկիզբը զրուած Տիտանիի մէջ բացայայտօրէն նշանակուած է թէ, Առաքելոց ժամանակէն ետքը կիրակի օրերը միայն հասարակաց պաշտամունք կը կատարուէր, պիտի սխալած շըլլանք երբեք խորհելով թէ այդ սեղմումը խոհականութենէ թելազրուած կարգադրութիւն մըն էր, ներսնի հալածանքի ատեն, թերես նոյնիսկ Առաքեալներուն կամ անոնց յաջորդներուն հրամանաւ կատարուած, և ոչ թէ Շմիօրինակութեան կամ առաքելական պարզութեան սկզբունքներով տնօրինուած։ Ասոր ապացոյցն է նախ այն՝ որ Առաքելոց ատեն զոյութիւն ունէր, ինչպէս տեսանք, ամէնօրինայ ժամասացութիւնը, երկրորդ՝ այն՝ որ հալածանքի դարերը անցնելէն անմիջապէս յետոյ, այսինքն չորրորդ դարէն իսկ վերսկաւանիկա վայելուած ազատութեան հետեանքով, և երրորդ՝ վերջապէս այն՝ որ Տիտանիի մէջ դրուած պատակերը թէ քրիստոնեան օրը երբեք անդամ պէտք է Հայր մեր ըսէ, թէկ առանձնական աղօթքի ակնարկութիւն է անշուշտ, բայց աներկեանօրէն վերջամացութիւնն է Առաքելոց ժամանակին ամէն օր երբեք անդամ կատարուած պաշտամունքին։

Դ. դարու կէսէն առաջ, արդէն Եկեղեցոյ մէջ վերսկաւած էր առօրեայ ժամասացութիւնը։ Նախ Արևելքի մէջ և ոչ շատ յետոյ նաև Արեմուաքի մէջ։ Պետնադամբաններու մութէն հազիւ զուրս եկած՝ քրիստոնէական պաշտամունքը, և հոգուով և ծմարտութեամբ կատարուած աղօթքը, ընդլայնուած ձևակերտումներով ուռնացաւ և բարզաւաճեցաւ միշտ այն կանոնական ժամերու յատակազմին վրայ սակայն, զորս Առաքեալները իրենք ինքնին կազմած և

մշակած էին հրեական պաշտամունքին նկատառութեամբ։ Այդ զարգացումը իր ոյժը կը ստանար երկու կարևոր ազդակներէ, որոնցմէ մին էր վանականութիւնը, որ զարմանալի արագութեամբ աճեցաւ լնդհանուր Եկեղեցւոյ մէջ, ազօթքի կեանքը կարգաւորեալ գրութեան մը վերածելով, իսկ միւսը՝ դուռանաբանական զիտութեանց մշակումը, որուն չնորհիւ քիսառնէական խորհուրդներու ներգործութիւնը թափանցեց բարեպաշտութեան մէջ, եկեղեցական տարիին շրջանին մէջ հետզհետաէ լնդունուած տէրունի և սրբոց տօներու հաստատումով։

Ուխտաւորունի Սրբունի Էթէրինայի ի Սուրբ Տեղիս ուղեղութեան մէջ կը տեսնենք որ, Երուսաղէմի մէջ և շրջակայքը, 385ին արդէն զոյութիւն ունի գիշերային (matines nocturnes) պաշտամունքը, որուն կը մասնակցին վանականները և բարեպաշտ աշխարհականները. իսկ ժողովուրդը, քահանաները և սարկաւագները թէն որոշ օրեր միայն կու զան այս պաշտամունքին, բայց ամէն օր ներկայ կը զանուին մէջ, այս երկու ժամերէն զատ, գեռ կը յիշուին Երրորդ ժամը (Tierce), Վեցերորդ ժամը ( Sexte), ուր ազօթք կ'ըլլար, ինչպէս այժմ, միջօրէի գերին դէմ պատապարուելու համար, իններորդ ժամը (None), որմէ վերջ կը մատուցաւէր Ս. Պատարազը։ Ֆիշ յետոյ միայն, այսինքն ամէն պարագայի մէջ ե. դարու սկիզբէն առաջ է որ կը սկսին նաև Լուսածազը (Prime) կամ Արեւագալը, ուր կը կարգացուէր Շնորհուած, Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ . . . Սաղմոսը, ինչպէս այժմ, Խաղաղականը (Office à l'entrée de la ville) և Հանգըրաւեանը (Complies)։

Դրինք հոս այս քանի մը մանրամասնութիւնները, հասկցնելու համար առաջին երեք դարերու լնթացքին՝ շառաքելական պարզութեան սկզբունքով՝ ամէնօրեաց ժամերգութիւն եղած յլինելու կարծիքը ճիշդ չէ ըստ էութեան, և յետոյ օրական ութը կամ նոյնիսկ ինը ազօթաժամերը, զոր ունի սեր Եկեղեցւոյ ժամապիքը, իրենց կերեք՝ իրենց սկզբնական ծագումին մէջ, և իրեն-եօթը կամ ինը՝ իրենց զարգացեալ ձերին մէջ, ինչ են շատ, և կը հանեն զեեզ մինչև չորրորդ դարու երկրորդ կէսը. հետեաբար կը պատկանին այն ժամանակին, երբ գեռ զոյութիւն ունէր լնդհանրական Եկեղեցին, և ըստ այդմ, այն աշաններէն են, որոնցմով կը հաստատուի մեր Ս. Եկեղեցւոյ ընդհանրականութեան նկարագիրը։

Ու յիշեցնել պարտինք հոս, թէ բոլոր միւս իին և առաքելական Եկեղեցիները, Յոյն ու Հատինը մասնաւորաբար, ցարդ ունին առօրեայ ժամասացութիւնը նոյն այդ թիւով և անուամբ ազօթաժամերով, թէն քովանդակութեան տեսակէտով ինչ ինչ եղանակաւորումի ենթարկուած, ժամանակին հետէ

Արդ, պատշաճ է և արդար որ, ինչպէս կովկասահայ հոգեւորականութեան Համագումարը կը թուի թելաղբել, զեղչուի լուր օրերու ժամասացութիւնը, և Եկեղեցին, Աստուծոյ տունը, ստուն ազօթից, շարթուան իինդ օքերուն վերածուի լուռթեան և ամայութեան վայրի մը, որուն առջեն մարդիկ առաւօտ և երեկոյ անցնին ինչպէս շէնքի մը՝ որուն վակ դրան ետև ստայն են կապած սարդերը։

Հարցումին, ինչպէս Զեկուցումին մէջ նշանակուած բոլոր հարցերուն, պէտք չէ պատասխանել լոկ Շայոսի կամ ողջի արտասանութեամբ կամ ձեռամբարձ հաւանութեան կամ մերժումի շարժումով։ Վեհ. Ս. Հայրապետը հանրաքուէի չէ որ Կ'ենթարկէ ինչդի՞ները, այլ քննութեան և կարծիքի։

Պէտք է մէն մի հարցը քննել կրօնական և եկեղեցաղիտական և անցեալի ու ներկայի տեսակէաներով, և յետոյ բանաձեռել և յայտնել կարծիք մը։

Արդ, հարցը առաջին երեք է կտերուն զրայ փոքր ի շատէ նկատի առաջելէ վերջ, իրաւունք կը զդանք մեզի խօսնելու թէ անշուշտ ոչ բանաւոր է և ոչ գործնական և ոչ նոյնիսկ կարելի որ լուր օրերու ժամերգութիւնները այսօր կատարուին անթերի ամրովութեամբ և այնպէս՝ ինչպէս կը կատարուէին անոնք ի հնումն վանքերու և անտպաներու մէջ, ուր եկեղեցականներու և ժամասաց պաշտօնէից թիւը և միջավայրին յարմարութիւնները տաէն բաւականութիւն կ'ընծայէին առ այդ։ Կարելի է նոյնիսկ մտածել թէ այդ դարերուն իսկ արդէն համառօտութեան տեսակէտով տարբերութիւն մը պէտք է եղած լինի վանական և ժողովրդային եկեղեցիներու ժամասացութեանց միջև։ ու թերեւ ատոր համար էր որ երր Շնորհալի ուզեց բարենորոյել պաշտամունքը, Թեղենեաց և Մաքենեաց վանքերու Խրամ ծամասելինացը բերել տուաւ։ Դիտելի է նոյնպէս որ արդէն ժամանակին հետ, եկեղեցական իշխանութեան տնօրինութեամբ կամ մասնաւոր կարգադրութեամբ և ինքնարերաբար, կարդ մը փոփոխութիւններ մուտ զոտած են կամ զեղչումներ կատարուած են պաշտամունքի մասերուն մէջ։ բայց լուր օրերու ժամասացութեան ջնջում ոչ մէկ ատեն մտածուած և իրազործուած է Հայ Բնաշխարհին և տարաշխարհիկ այն գաղութիւններուն մէջ, ուր Հայ Եկեղեցի կայ և հայ հասարակութիւն։ և եթէ ուրեք սւրեք չի կատարուիր ան այժմ իսկ Եւրոպա կամ այլուր, ատիկա հետեւանք է տեղական հոգիոր իշխանութեան և պաշտօնէից գատապարտելի անփութութեան և ժողովոց և ժողովուրդի ցաւալի անտարբերութեան։

Հայ Եկեղեցին բաց պէտք է լինի ամէն օր, կանոնական աղօթաժամերուն։ Ժողովուրդ լինի կամ ոչ, հոգեորական պաշտօնեան պէտք է կատարէ ժամասացութիւնը։ եթէ ունի իրեն պաշտօնակիցներ կամ սղնականներ՝ կատարելով ամրովյն ըստ կարգի։ հակառակ պարագային՝ կարդալով զէթ աղօթքները, և մասցեալը քաղելով լուելեայն։ Հաւասացեալը, որ այդ պահերուն կը մտնէ Եկեղեցի, պէտք է զառ զտնէ կանթեղը Ս. Սեղանին վրայ, պէտք է ընդունի աղօթքին, մաղթանքին, բնթերցուածներուն և օրհներզներուն աղղած հոգեոր սփոփանքը, կամ զէթ տեսնէ քահանան լոին, աղօթասոյզ, բեմին կամ զրակալին առջև։

Աչ մէկ հին և առաքելական Եկեղեցի թոյլ կու տայ իրեն՝ լուռ պահել Աստուծոյ Տունը լուր օրերը։

Ամէնօրեայ ժամասացութիւնը, նոյնիսկ իր ամփոփ ձերն մէջ, անհրաժեշտութիւն մըն է Եկեղեցւոյ և մեր կրօնական բարբերուն համար։

(«Սիոն», 1937 Դեկտեմբեր)

Թ.ՈՐԴՈՄ ԳԱՏՐԻԱՐՔ

(Եառումակելի՝ 3)

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱՊԻԹԻՆ

### ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱՊԻԹԻՆ

**386.** ՀԱՅ ՄԱՆԿԱՆ ԿՆՔԱՀԱՅԲԸ ՀԱՅԱԴՐԱՎԱՐԱՆ ՊԵՏԸ Է ԸԼԼԱՑ. — Որովհետեւ կնքանայրը տմէն պարագայի մէջ երաշխառողը, խնամակալը և զկայ է երեխային հաւատքին, այս պատճառուա կնքահօր անձին վրայ կը պահանջուին այն պայմանները, որոնք կրնան արդարացնել գործ ստանձնելու պահանջները: Ամենէն առաջ ինքը պէտք է ունենայ երեխային դաւանուելիք հաւատքը, որովհետեւ երաշխառոր և զկայ է երեխային հաւատքին, Այս պատճառուա ննոր չէ անհաւատները, հեթանոսները և այլակրօնները կնքանայր կեցնել: Այդ բանը բացայացա կուտանդէ Տաթեացին (Էջ 591): Նոյնը պէտք է ըսի հերետիկոսաց համար ևս, որոնց հաւատքը բոլորովին օտար է, ինչպէս նույն ոչ ուղղափառներուն նամէր, որոնք թէ միացելու են մեզի հետ երեք ժողովներու դաւանութեամբ, բայց կը զատուին մնէն զերաբարդուած յաւելուաններով, ինչպէս Յունադաւաններուն և Հռովմէադաւանները ելն: շատեր կը կարծին թէ թերութիւն մը եղած չ'ըլլար եթէ զանոնք կնքանայրութեան ընդունինք, որովհետեւ կրնան հաստատել բանին մարդկութեան և Սուրբ Երրորդութեան վարդապետութիւնը: Բայց քանի որ մեր եկեղեցին մէջ մկրտուողները Հայաստանեայց մեր ուղղափառ եկեղեցին պիտի որդեգրին, զոր չեն ընդունիր և չեն դաւանիր այսպիսի կրնայրերը, հոգեւորական իշխանութեան հրանագները խստիւ կը պատուիրեն որ մեր ուղղափառ եկեղեցին հաւատացեանները միայն ընդունուին կնքանայրութեան մէջ:

**387.** ՄԵՐ ՄԷՋ ԿՆՔԱՄԱՅՐ ԾՐԴՈՒՆՆԵԼԻ ԶԵ, ԽՈԿ ՄԱՆՈՒԿ ԿՐԱՎԱՀԱՅՐՈՒԹԻՒՆՆԵԼ ԶԱՂ- ՎԱԼԻՄ Ե: — Բայց մնաք սովորութիւն չունիք, մանաւանդ թէ յայտնի արդեւք կայ, որ մեր հաւատացեաններէն կիներ

ընդունինք այդ պաշտօնին: Զայդ կը գրէ նուև Տաթեացին (Էջ 591), թէև յառաջ բնորոծ փաստերը վարդապետական մեծ արքէք մը ընդունին և ասկայն կրնան նկատուիլ իրեւ օրինական փաստ: Յաւնական եկեղեցին անխտիր կ'ընդունի կնքանայր ու այս վերջինը կը գրէ նոյնիսկ իրական մանուկներու նոմարք իսկ կատինսերը կնքանար հետ կնքանայրը ալ կ'ընդունին, այսինքն կնքանար կինը կոմմ վրայը, ուստի և Հոյ Հռովմէականները կնքանար կողմը և պատիւը կի պահնեան ընտանիկան շրջանուկներուն մէջ: Ու կ'երեկի թէ մերինին խրստագոյն և ընդհանրագոյն այն բարքին մէջ, որով արևելեաց մէջ կիները շատ չէին երենուր:

Իսկ մանուկներուն և տղաքներուն կնքանայր կանգնիւը զեղծում է պարզապէս, որովհետեւ ինչպէս երեխային հաւատքին երաշխառոր, զկայ և փոխուորդ կրնայ լինել մէկը, որ ինքն ալ պէտք ունի իրեն համար երաշխառորի: Ուստի գոնէ արբանքի հասած և իրենց հաւատքին գիտակութիւնը ունեցող պատանի ները պէտք է կոչել կնքանայրութեան: Ի վերջոյ արեղաներուն և առնաւորդ կուսակրոններուն ալ ներեկի չէ կնքանայրութեան պաշտօնը, և այս մանաւանդ ընտանիկան ինամակասութեան պատճառու, զոր կնքանայրերը պարտականութիւն կը նկատեն իրենց իրենց համար իրենց սաներուն վրայ, երբ անոնք իրենց ծնողքը կորոնցնեն, ինչպէս նույն ընտանիկան բարարերութեանց համար սանայրերուն և սանամայրերուն հետո:

**388.** ՀՈԳԵՆԻՐ ԱԶԳԱԿԱՆԱՅԻԹԻՒՆ ԿԸՆ- ՔԱՆԱԿԱՅՐՈՒԹԵՆԵ: — Կնքանայրութեանէն կը ծնի հսկեար ազգականութիւն, որ մարմաւուրին պէս խսփանիչ կ'ըլլայ մերձաւոր ամուսնութեան, բայց այս մասին կը խօսինք երբ կարգը գոյ պատիրն: Լատին- ները հսկեար ազգականութիւն կ'ընդունին ոչ միայն կնքանայրերուն և սաներուն, այլ նաև անոնց մերձաւորներուն, մանաւանդ աւելի ևս տիրապէս կնքողին և կնքանայրին միջն, այսինքն մկրտու-

քանուսային և մկրտուող իրեխային միջև։ Ու ասիկա թերեւս ոչ ի զուր, զի եթէ մորմատոր ծնունդին պէս կազմուեցա հոգեւոր ծնունդն ալ, տպա ուրեմն աւազանէն ծնողին հոգեւոր ծնողն է մկրտիչը և ոչ թէ կնքանայրը։ Սակայն մեր գրքերուն մէջ ոչ մէկ ակնորդ կայ այդ ժամասին, և նոգեոր ազդականութեան հորցին մէջ կը յիշուին միայն կնքանայրը և իրենց մերձաւորները ու ոչ երեք մկրտարչները և իրենց մերձաւորները։ Դուցէ մասնաւոր քանանայից դրսութիւնը և գիւղերու մէջ քանանայից քիչութիւնը բըռնադասեց մտադրութիւն չգարձնել մկրտարչներուն ազգովանութեան, որպէս զի գիւղեական քանանաները անհնարութեան չհանդիպին իրենց զաւակներուն ամուսիններ գանելու համար։

389. ԵՐԵՒԱԼՑԻՆ ՀՐԱԺԱՐՄՈՒԽՔԻ. — Կնքանօր մասին խօսեցանք մկրտութեան Մաշտոցին մէջ յիշատակուած ըլլալուն համար միայն, որպէս ետք արարողութեան կարգը գեռ երեխային օրհնութեան մէջ է։ Նորոնաւատը, որ երեխայութեան մէջ կը ժանէ, պէտք է մերժէ, լքէ նախկին անհուսաւութիւնը և անկից յառաջ եկած յարաբերութիւնները չարին իշխանութեան հետ ու այս է հրաժարեցմունքը կամ հրաժարիմքը։ Մեր Մաշտոցներուն այժմեան ձև կը պատուիրէ Հրաժարիմքը երեսը արեմուտք գործած, իսկ ձաւատամքը՝ գէպի արեւելքը Բայց ուրիշ ազգերու ծիստրանները Հրաժարիմքը և ձաւատամքը կը կատարեն մկրտչին և ընդունողին միջև հարցումով և պատասխանով միայն։

Ու Օձնեցին կը մեղոդրէ իր ժոմանակի պաշտօնեանները զգի ոմանք չհրաժարելոյն ի սատանայէ նոցա հարցմանը ի վերայ ոչ երեխն զերդմունս և ոչ ըգուրը երրորդութեանն խոստովանութիւն» (էջ 8)։ Եւ ասոր համար է 1840 թուականին վենեսիեկ տպուած Մաշտոցը, ըստ վաղեմի ընտիր և երկաթագիր օրինակի, ինչպէս կ'ըսուի յառաջաբանին մէջ, թէպէտ և հրաժարակիչները իրենց համար կ'ըսէն թէ օրինակին մէջ յաւելուածներ ըրած են, որուն համար երկու-

անքի տակ կը մեայ թէ մ՞րն է բուն սկզբնագիր մասը և մ՞րը յաւելուածը։ Արդ, այդ օրինակին մէջ ալ հորցումնզ և պատասխանով տպուած հն հրաժարելուն և հուսառաջուն յայտարարութիւնները, սովորական օրինակներու միահետ խօսքերէն վերջ։

390. ԵՐԵՒԱԼՑՈՒԹԵԱՆ ԽԻՂԸ ԵՒ ՕՇՈՒՄԸ. — Ի լրաւմն երեխային օրհնութեան, կը կատարուէր անոր օծումը, երեխայից պարզ իւղով, որ հիմա դադրած է մեր եկեղեցիներուն մէջ, բայց աներկրացիլի է որ անիկան կար հին ատենները։ Ասոր կը վկայէ Օձնեցին, որ կը վկայէ թէ երեխային օծումը հրաւեկան բնոյթունի ու յանդիմանելով յետոյ զանոնք, որ ոչ յերեխայութեանն մատուցանեն ձեռնադրութեամբ յօծումն, այլ միայն մկրտութիւն աւազանին վազվաղեալ ի ներքս անկանին (էջ 8), ու կանոնին մէջ ալ կը պատուիրէ թէ պարտ և արժան է զերեխայիցն զենուադրութիւն և զօծումն և զյոստովանելն առ դրտն մկրտութեանն կատարել և ապա տանել ի ներքս ուր աւազան է և մկրտել» (էջ 27)։ Երեխայից իւղին խափանումը յառաջ եկած է երեխայութեան վիճակին խափանումէն։ Որովհետեւ նորածին երեխանները նոյն ատեն կ'ընդունին երեխայութիւնը, մկրտութիւնը և գրումը, և մկրտութեան եւ անէն կու գայ դրումի օծումը, ատօր համար աւելորդ թուցաւ երեխայութեան նախօնթաց օծումը։ Թէկ Օձնեցի իր ժամանակին մէջ ջանաց աւղղել խափանումը, որ սկսած էր սովորական դառնալ, բայց յալթեց սովորութիւնը և վերջին ժամանակներու Մաշտոցներէն ինկա անոր յիշատակութիւնն անգամը։

391. ԵՐԵՒԱԼՑԻՑ ՕՇՈՒՄԸ. — Բայց օծումին ենթքը բոյլորպին չէ կորսուած։ Երեխայութեան մեծ աղօթքին մէջ, ուր այսօր կը կարդանք. «Եւ այժմ ազգամքը զքեկ, Տէր բարերար, առաքեալ զշնորհա ամենառուրբ Հոգուայդ, զի որ օծից արբայրոյ իւղովն եղիցի ի նմա ի սրբութիւն հոգեւոր իմաստութեանն» (էջ 12)։ Վենեսիեկինան

որինակը ունի. «Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր բարերար, առաքեա՛ զշնորհս Հոգւոյդ Սրբոյ յիւզա այս, զի սր օծցի սովորութիւնը և կիցի նման եւոյլին (էջ 18). Նաև Սորկուագիրն այժմեան քարոզը որ կ'ըսէ ռվասն իջանելոյ չնորհաց Հոգւոյն Սրբոյ ի ձևու բւզոյն այսորիկու Խոկ Վենետիկեանը ունի. և վասն իջանելոյ յիւզա յայս շնորհաց ամենազօր Հոգւոյն Սրբոյց Այս խօսքերը ուրիշ բան չեն կրնար ըլլուէ, եթէ ոչ ակնտրկութիւն միայն երկիրայից իւղին, որուն համար կանոնները կ'ըսնեն թէ պէտք է օրնենել զոյն իւրաքանչիւր անդամի համար և սպառել: Թէս ազօթթին տեղը շփոթուած կ'երեւէ, որովհետեւ վենետիկեան օրինակը առ իսրագիրը ունի. Եւ եղիցի պատրաստ էէթն երիխայից և թացեալ զրոյթն ի ուուրը ձէթն և առնի ի սիրոն խաչ և ի թիջնամէջսն, ի նշան մրցութեան ընդդէմ թըշնամւոյն և տօէ. Օճանեմ զքեզ, և այլն (էջ 17): Ուրիշ ազգերուն մէջ ալ այսպէս կուրժքին և թիջնամէջին վրայ կը կատարուի երեխայութեան օծումը Խոկ եւ րիխայից ձէթին պատրաստութեան և կիրառութեան մոսին բացայացն է Ծննդեցին կանոնը. «Պարտ և արժան է մկրտութեան ձէթն քահոնային օրնենել մի շատ միջոշէ ընդ մկրտելն, ըստ բաւականի ժամուն պիտոյից և նոյնժամանի առ մկրտութեան մերձեցուցնելով զօրնեան սպառել, և մի իշխան միւսանգամ օրնեալոյն բազում անգում օրնենել և միտյն օծունի նովում զերիխայն և զմկրտեալոյն ընդ մկրտելն յաւազանեն և յոյլ խորհուրդ օծման մի իշխանցէ մատաւանել զնոս (էջ 26): Լատինները և անսոնց հաւաքութեամբ Հռովմէակոն Հայքիրը ամէն տարի կը պատրաստեն երիխայից իւզը, Աւատ Հինգշարթի օրը, և պիսկովսոսի օրնութեամբ։

392. ԿԱՐԴ ՕՐՀԱՆԻԹՍԼԻՆ. — Երեխայից օրնուութեան վերջ կու զայ կարգը ջուրին օրնուութեան, սաղմոսներով, երկիրով, ընթերցուածներով, ազօթթին Սրբոնի հնողուուով և տեսանգործութեամբ, Աստուածայիշյանուութեան Զրօրհնեաց մէծ կանոնին համաձայն Արք,

այս կարգը որ ծիսականէ է, Խորհուրդին համար պէտք եղած ջուրը նուիրագործեր լու համար, էական չէ իրեւ Խորհուրդին մաս Այս պատճառու այս Եկեղեցիներուն մէջ սրոնց ժողովուրդը շատ է և մկրտութիւնները յաճախ կը կատարուին, անզամ մը օրհնուած ջուրը կը պահուի յատագայ մկրտութեանց համար ես, և ջուրին օրհնուութեան կարգը նորէն չէ կատարուիր:

393. ՄԿՐՏՈՒԹՍԼԻՆ ԵԿԱՂ. — Արարութեան րուն մասն է մկրտութիւնը, ուր մկրտիչը երիխան տազանին մէջ կ'իշեցնէ, անոր կը մօտեցնէ նիւթը և կ'արտասանէ ձեր և կը կատարէ Խորհուրդը Նիւթին և ձերն մօտին խօսած ատանիս, ըստածններուն վրայ ոչինչ ունինք տւելցնելիք: Կարճ ազօթք մը սկիզբէն և կարճ Աւետարանի ընթերցուած մը վերջէն, կը բացանին արարազութիւնը, այնպէս որ եմէ երիխայութեան և ջուրին օրհնուութիւններուն վրայ ոչինչ ունինք տւելցնելիք: Կարճ ազօթք մը սկիզբէն և կարճ Աւետարանի ընթերցուած մը վերջէն, կը բացանին արարազութիւնը, այնպէս որ եմէ երիխայութեան և ջուրին օրհնուութիւններուն վրայ ոչինչ ունինք տւելցնելիք: Աւետարակ խօսելով, այսպէս մտնր տարբերութիւններ կը դժուուին յաճախ զրչազիր ծիսարաններուն մէջ ոլ և արդիւնք են համառատաթեան և դիւրաթեան ջանից, արժանց ճիմա ոլ կը կեալի իւրի Խորհուրդներուն պաշտօնեանները:

394. ԱԽԱԶԼՈՒԻՆ ՆԵՒԹԸ ԵՒ ՑԱՂ. ԸԼՈՒՑ ԿԱՆՈՒՆԻ. — Աւազանին համար, որուն մէջ մկրտութիւնը պիտի կատարուի, Օճնեցիին կունոնց այսպէս կը գրէ. Անչ է պարտ զաւագուն յայլ իմնքէ նիւթոյ պատրաստէ և կամ ուրանոր կամեցի, այլ աւազան քարեզն հաստատել ի սմբի իսկ յէկեղեցւոց և կամ անզէն մերձ յէկեղեցին ի մկրտատուած (էջ 26): Աշտարակեցիին կանոնը կ'ըսէ. և կանգնեացի յէկեղեցւոց կամ ի տանն պաշտամուն թէ՝ քարեզն թէ՛ զինչ և իցէ երկիրազամութեամբ, արժոնի և բաւականութեամբ գործ,

խորութեամբ, զի բաւականաչափ ծածկեսէ ջուրն գհասակ մանկան որ մկըրտիցենք (Ներ. ԺԵ. թղ. 128): Նիւթն քարէ տորքեր ըլլալը անշուշտ հարկը ունի ի նկատի, առանց սակայն հաստատութեան հանգամանքը մօռնալուու իսկ կանոնին ըստ չափին գալով, պէտք է զայն յիշել նորոկերտ աւազաններէն շատերուն առթիւ, որոնք չունին ոչ օրինադրեալ մեծութիւնը և ոչ ալ խորութիւնը:

395. ԱՐԱՋԱՆԻՆ ՏԵՂԸ ԵՒ ՄԿԲՏՈՒԹԵԱՆ ՎԱՅԻԸ. — Եկեղեցւոյ մէջ հաստատան աւազան գոնոսիւը պարտաւորիչ է ի հարկէ իրաց, սովորական կարգին համեմատ, ապա թէ ոչ երբ անհրաժեշտ ըլլայ, կարելի է մկրտել որեւէ տեղ և որևէ անօթի մէջ, բաւական է որ անոնց մէջ անպատշաճութեան հանգամանքը չըլլայ: Այդ ժամանին բացայայտ է Մակրեան կանոնը. Շնչառ եթէ դիպեսի ոք ուր ոչ է եկեղեցի և կարգաւոր աւազան, չէ արժան արդելու որ կամիցին մկրտել, այլ կատարել զմկրտութիւնն առանց կարգաւոր աւազանի, վասն ի հարկէ պիտօքիցն է, զի մի գտցէ պարտական փրկութեան, խափանելով զմկրտութիւնն (Մկր. ՅԵ. թղ. 80): Այս մեթաքով է որ կ'աւելիցնէ Աշտարակեցիին կանոնը. Ճեւ ի տուն շինականացն քոնանացին մկրտութիւն մի իշխացեն առնել բայց վասն երկիւղի մահաւոնն թէ վտանգ ինչ իցէ (Ներ. ԺԵ. թղ. 128): Կանոնական կերջին քաղղուածները, որոնք Շնօրհալիին անունով են, հետեւաց հրահանգներն ալ կ'աւելիցնեն պարագայից հարկին առջեւ. Ճեթէ եկեղեցի ոչ լինի և երեխան ի մեռանել է, պարտ է աւազան օրհնել յոր ինչ և իցէ նիւթոյ վասն հարկին և մկրտել և եթէ հաղորդ լինի առձեռն հաղորդել, և անօթն թէ այլ ոչ է պիտօյ, թաղեսի ի ուուրբ և անքոյթ անզուջ և ջուրը մի լիցի կոխումն և ոչ օրհնեալ անօթն այլ ինչ գործ և միտ առանց օրհնելոյ աւազանն մկրտել ի վայրապար ամանի, բայց թէ հարկն ստիպէ, մկրտեսցէ, բայց զանօթն յայլ գործ մի անցուցէ (Ներ. թղ. 274):

Հարունակելի՝ 40)

396. ԿԻՆԵՐԸ ԶԵՆ ԿՐՄԱՐ ՄՊԱՍՆԱԿՑԻՆ ՄԿԲՏՈՒԹԵԱՆ. — Մկրտութիւնը պաշտելու համար Ներսէս բագրեանդացւոյն կանոնը կ'օրինադրէ. «Մկրտութիւնը մի ոք ծուլ լութեամբ իշխացէ առնել, որպէս լսեմք, այլ երկիւղիւ և զգուշութեամբ, բուրվառոք և ճրագօք, և առաջաստեալ վարագուրօք, որպէս զայել է սրբոյ աւազանին» (Ներ., նոյն): Այդ կը ցուցնէ թէ մկրտութեան պաշտամունքին ատեն պէտք է գործածել եկեղեցական զարգեր և սպասներ, ինչպէս ամէն Խորհութիւ ատեն: Այժմ եւս սովորութիւն է որ մկրտիչ քառանաները զգեստաւորուն ինչպէս պատարագի ատեն, բայց բուրվառութիւ ստրկաւգ և մօմակալ դպիր միշտ չեն զբանըրիր, և հարկ է որ քահանաները իրենք մինակ չկատարեն Խորհուրդը, առանց մէկուն սպասաւորութեան:

Ըսդհանուր սովորութիւն է և կարգը Մշացացներու մէջ գրուած է խորագիրներուն մէջ թէ կիսներ պէտք չէ մօտենան աւազանին: Այդ խօսքին միտքը անշուշն ոչ թէ պղծութիւնէ զգուշանալու համար է, այլ թէ պատշաճ չէ պարզապէս կիներուն մասնակցիլը սեղանին և Խորհուրդներուն ծառայութեան: Այս մտքով է նաև Աշտարակեցիին կանոնը. Ճեւ կանայք առ քահանայա մի իշխացեն կալ, բայց ստրկաւգունքն սպասաւորեցնեցն, և կանայք իւրեանց տեղիս աղօթիցնեն, և մի իշխացեն գործակիցը քահանայիցն, որպէս լսեմք, իինելով որպէս զարկաւգունս (Ներ. ԺԶ. թղ. 128): Կը կարդանք հին գիրքիրուն մէջ, թէ երբեմն ստրկաւգունքիներուն պաշտօնն է կին երեխաներուն սորվեցնելը և գանոնք մօտեցնելը և քրիստոնէական կանոնք մէջ մտցնելը: Սակայն այդ ամէնը պէտք է հասկնալ խորհրդական պաշտամունքին արտաքոյ եղած պարագաներու համար: Շատ բացայացն են Մահակեան կանոնները. Կանայք ի ժամ մկրտութեան մերձ առ քահանայա մի իշխացեն կալ, որպէս սովորեցն ամանիք առնել յանդգնութեամբ և մկրտիչը ընդ նոսա, այլ ի տեղուջ իւրեանց աղօթեցնեն (Ներ. ԺԶ. թղ. 172):

ՄԱԴԱՐԻԱ ԱՐՔԵՊՈ. ՕՐՄԱՆԵԱՆ

## ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ

### ԽՈՐԴԱՐՈՒՄԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Պար» է նորագոյի ընտիգօն Տեղակ Մերժ  
Ցիսուսի Քրիստոսի»

1984 ապրուան 366 օրերը հասան իրենց լրումին: Այօօր, մարդկութիւնը կնայած է նոր տարուան սեմին: Ամսանորի առթիւ մարդիկ իրար չնորմաւորութեան քարտեր են ուղարկում, հեռագիրներ՝ եթէ հեռու են միմիանցից, իսկ եթէ մօտ են՝ այցելութիւններ են կատարում, բարեմաղթութիւններ փոխանակում ի նշան յարգանքի և բարեկամութեան: Առևտարական հաստատութիւնները իրենց տարեկան հաշիւններն են փակում և նոր հաշուեսեարեր բացում:

Չմոռնանք, սիրելի հաւատացեալներ, որ եկեղեցին ևս ունի իւր նոր տարիին՝ Ծննդեան և Աստուածայայանութեան մեծ տօնը, որից սկսում է և միւս տօնների կարգաւորութիւնը: Իրբե հոգեսոր հայր, սրասագինս շնորհաւորում եմ երկու տարիներն էլ և Աստուածոյ օրհնութիւնը՝ հայցում ամենքի վերացում:

Այս զոյտ առիթներից օգտուելով, կը կամենայի խօսել նաև Ս. Ծննդեան տօնի մասին:

Մարդկային սովորական հասկացողութեամբ, երկինքն ու երկիրը իրարմէ հեռու և տարերը գոյացութիւններ են, երկինքը՝ վեր, ուր Աստուածութեան առթուն ենք երեակայում, իսկ երկիրը՝ ներքե, ուր մեղաւոր մարդիկ են բնակում, հեռու միմիանց անհուն տարածութեամբ: Սակայն Փրկչի ծննդեամբ, ինչպէս նաև հասագային Անոր գործունէութեամբ ու Աւետարանին քարոզութեամբ, այդ հեռաւորութիւնը ջնջում է,՝ որովհետեւ Աստուածոյ ներկայութիւնը միայն երկնումը չէ, այլև երկրի վերայ, առաւել ևս մեր սրաերի և հոգիների մէջ, Այս է ահա քրիստոնէութեան բերած ամենամեծ բարիքն ու նորութիւնը: «Արքայութիւնն Աստուածոյ ի ներքս ի ձեզ է»:

Մեր բոլորիս երջանկութիւնը, երկրաւոր և յաւրահենակուն բովանդակուաթեամբ, մեր ներքին աշխարհի մէջն էր ի զուր կը լինի Բնիթղենէմի մէջ պատահած ծնունդը Փրկչին, եթէ նա չծնի նաև մեր սրաերի և հոգիների մէջ և իր անձով, կհանգով ու քարոզչութեամբ իրանց զեկավարն ու առաջնորդը չդառնայու ձիշդ այս մտքով է, որ առաքեալն էլ կորընաթացիներին զրում է: ԱՌ' չ գիտէք, եթէ տաճար էք Աստուածոյ և հոգի Աստուածոյ բնակեալ է ի ձեզ (Ա: Կորն., Գ: 16):

Նոյն մտքով բայց տարբեր ձեւակերձ պութեամբ է բացատրում Աթանատ Հայք բավետ մարդեղութեան մեծ ինորհուրդը՝ Աստուած մարմնացաւ, սրպէսովի մարդը աստուածանայ, այսինքն դէպի Աստուած բարձրանայա: Փրկչի ծննդեամբ, գծուեցաւ ու պարզուեցաւ աստուածանուլու, այսինքն՝ Աստուածոն նմանելու ճանապարհը: Եթեսու իր լիրան քարոզի մէջ պատուիրում է լինել կատարեալ, ինչպէս երկնաւոր Հայրը (Մրկ. Ե: 48):

Աստուածոյ հայրութեան գաղափարով մարդիկ գառնում են եղբարյներ, որով միայն կարելի է խաղաղութիւն հաստատել երկրի վերայ: Ուր մարդկային եսն է իշխում, ասելութիւն կայ, զէն ու կարւ Այստեղ ո՛չ Աստուած կայ և ոչ էլ խաղաղութիւն: Այս միտքը պատկերաւոր կերպով յայնուած է Եղիսա մարգարէի պատմութեան մէջ: Աստուած չի երեւում նրան փոթորկների և ամպրոպների մէջ, այլ քաջցր զիփիւրի և կատարեալ խաղաղութեան մէջ:

Վերջացնելով մեր խօսքը, յորք ռում ենք ձեզ հանդուրժան լինել փոխադարձար իրարու հանդէպ և փոքր ինչ զուսպ և բարեացակամ վերաբերմունք ունենալ:

Նոր Տարուայ և Ս. Ծննդեան բարեարաստիկ առների առթիւ, սրտադինս աշօթում ենք որ նորոգուին նաև մեր սրտերն ու հոգիները, և երեշտակներէն աւետած խաղաղութիւնն ու հաճութիւնը հաստատուին համայն աշխարհի վերայ:

ՈՈՒԲԷՆ ՎՐԴ. ԱՌՎԱԿԻՄԵԱՆ  
14 Յունուար 1985

## Ս Ա Ր Ո Ւ

### ՍԻՄՈՆ ՈՐ ՊԵՏՏՐՈՍ ԿՈՉՈՒԵՑԱՒ

Գալիլիոյ լճի ափերուն, եղրօրս Անդրէասի համ մեր ուռկանները ջուրը նետած էինք, երբ առաջին անգամ անսոյ իմ Տէրա՝ Յիսուսը, Ալիքիները կատաղի ու մեր սրտերը ծանրացած՝ հազիւ մի քանի ձուկեր կրցած էինք բանել.

Յանկարծ կանգ առաւ Յիսուս մեր մօպ, կանչեց մեզ մեր անուններով ու ապա ըստաւ.

— Հետեւցէք ինծի և ես պիտի առաջնորդեմ ձեզ հոսանուախ մը՝ ուր բազում ձուկեր կան:

Երբ օկանյ իր գէմքը դիտել, ուռկանը ինկաւ ձեռքէս, բացավառաւմ մը զդոցի իմ մէջ և ճանցայ զինքքը ես քարացած էի, երբ եղրոյրս Անդրէաս ըստաւ.

— Մենք գիտենք բոլոր հոսանքները այս ափերուն, և գիտենք մանաւանդ, թէ փոթորկոս օրիր, ձուկերը մեր ուռկաններու հոսողութենէն վար կը լոդան:

— Հետեւցէք ինծի ՝ ըստաւ Յիսուս — գէպի ափերը տւելի ընդուրակ ծովուն և և ձեզ պիտի ընկմ մարդու ձկնորսներ ու ձեր ուռկանները պարապ պիտի չմնան:

Լքցինք մեր նուր և ուռկանները ու հետեւցանք իրեն, Անտեսանելի ուժէ մը մզուած, կը քաւէի իր կողքին: Կը քալէի իր հետ, շնչառապա և սքանչացումով համակռութ, մինչ եղրոյրս Անդրէաս, շփոթած կը հետեւ մեզ:

Աւազին զրայ երբ մեր քայլերը անխօս իրենց ընթացքը ունէին, քաջութիւնը ունեցայ բանլու.

— Տէր, եղրոյրս ու ես պիտի հետեւ էինք բու քայլերուդ, ուր որ ալ երթառ, եթէ կարելի է, մեր հիւրը եղիք այս գիշչեր ու մենք պիտի շնորհազարդ ըլլանք քու այցելութեամբդ: Մեծ չէ մեր տունը և ոչ ալ բարձր անոր առաստաղը: Համեստ ճաշով մը թեզ կրնանք պատուել, Քու

այցելութեամբդ մեր հիւզակը մեզ համար պալատի պիտի վերածուի և հացի բեկանումովդ մեզ հնա, մենք պիտի վերածուինք երկրի իշխաններուն:

— Այս պատասխաննեց ժպիտով մը՝ այս գիշեր ձեր հիւրը պիտի ըլլամ:

Ուրախութեան անհուն հրճուանք մը զգացի իմ սրտիս և քալցիցինք իր համ մինչև մեր տունը: Տան սկզբն, Յիսուս ըստաւ միազգութիւն տանս այս և անոնց՝ որոնք հոս կը բնակինա:

Կինս, զոքանչու և աղջիկս ընդառաջին ու ծունկի եկան և համբուրեցին թեզանիքը: Ալշանքի մէջ էին, քանի որ Ըստրեւլը և Սիրելին մեզ հիւրութեան էր եկած: Տեսած էին զինքքը Յորդանան գետի ափին՝ երբ Յօվհաննէս Մկրտչչ ժողովուրդին կը յայտնէր Անոր ինքնութիւնը:

Կինս և զոքանչու ճաշի պատրաստութեան անցան, Եղրոյրս Անդրէաս ամօթիած՝ բայց իր հաւատքը ինձմէ աւելի խոր էր Յիսուսի հանդէպ: Տասներկու տարու եղողաջջիկս, Անոր պատմուեանը ձեռքին, նմանութիւնը ունէր կորսուած ոչխարին՝ որ իր հովհեն էր գտած, պահելով իր սրտին վախ մը, թէ կրնոյ մեզ յանկարծակի թողուլ ու հեռանալ մութ դիշերով:

Ապա բազմեցանք բոլորս սեղանին շուրջ, Ան բեկանց հացը և լեցուց զիսին ու գտանուվ մեզ՝ ըստաւ.

— Ընկերներ, Աստուծոյ չնորին է այս սեղանի պարզել և այդ չնորին կը կնտապատկուած կ'ըլլայ երբ զայն կը բաժնենք մեր միջն:

Ըստա այս խօսքեր նոխիքան պատառ մը առնելը, հետեւ ըլլալու համար մասնգական սովորութեան մը, որ պատույ հիւրը նոյն ժամանակ տանաւէր կը նկատուի: Իր շուրջը բազմած, տակաւ տա տակաւ կը զգայինք թէ Բագաւորական մեծ իրավիճաննքի մը մէջն էինք: Աղջիկս, անդիտակից պարմանուէի մը, պահելով արցունքի շաբաք մը իր աչքերուն, ապշահոր կը դիտէր իր գէմքը և ձեռքերուն շարժումները:

Սեղանէն բաժնուած նստած էինք արդէն դուրսը, արիշին տակի, կը խօսէր մեզ և ուշագրութեամբ կը լսէինք զիսինքը:

իսուցաւ մեզի մարդուն երկրորդ ծնունդին, երկնքի դռներուն բացման և հրեշտակներու, որոնք մարդոց պիտի տեսէին խողաղութիւն և հաճութիւն, և պիտի առաջնորդէին մարդը Աստուծոյ գահին։ Ապա նայեցաւ աչքերուս և խորը սրտիս ու ըստ։

— Թեզ և եղբայրդ ընտրած եմ և դուք անհրաժեշտութիւնը ունքի ինձ հետեւու։ Դուք աշխատանքով յոդնած էք ու ես ձեզ հանգիստ պիտի պարզեցմ։ Առէք իմ լուծս և սորվեցէք ինձմէ թէ խաղաղութիւնը իմ որտիս մէջն է ու դուք միայն հոն պիտի գտնէք լիութիւնը։

Երբ ըստ այս խօսքերը, եղբօրս հնա անգիտակից կերպով ոտքի էինք իր առջև։

— Տէր — ըսի —, պիտի հետեւինք Քեզ մինչև աշխարհի վերջը և եթէ նոյն խոկ լերան հակայութեամբ ծանր ըլլայ մեր բեռը, ուրախութեամբ պիտի տանինք զայն Քեզ հետո, եթէ իյսանք բեռան ծանրութեան տակ համրու եղրին, պիտի ունենանք գոհացումը և գիտակցութիւնը թէ երկնքի համրուն վրայ ինկած ենք։

Ապա, եղբայրս Անդրէսո ըստ։

— Տէր, թող ըլլանք գերձանն ձեռքերուց և թեղուի միջև, վերածէ մեզ կատիք, այնպէս ինչպէս որ կ'ուզես, որովհետեւ մենք պիտի ըլլանք Օծեալին հաւաւը։

Կինս ամօթխածութեամբ բարձրացուց իր գէմքը, ունենալով ապշանքի հեղեղ մը իր այտերուն և ուրախութեամբ ըստ։

— Օրնեալ թող ըլլայ Ան՝ որ կու գայ Տիրոջ անունով և օրնեալ այն արագանդը՝ որ թեզ ծնաւ ու սահնքը՝ որ թեզ սնոյց։

Հայացուց՝ Գ. Արքեզյ. ԳԱԶԱՆՁԵԱՆ

Աղջիկս, փոքրադիր իր հաստկով, ծուարած էր իր սութերուն քով։ Զոքանչս արիշին տակ նստած՝ անիօս կ'արտասուէր։ Ապա Յիսուս դէպի իրեն քալեց և կուրծքին հակած իր դէմքը վեր առնելով ըստ անոր։

— Դուն այս բոլորին մայրն ես, գիտիմ որ ուրախութեան լացն է որ կու լաս և թափուող այդ արցունքներդ պիտի մնան իմ յիշողութեանս մէջ։

Լիալուսինը նուաճած էր հորիզոնը։ Յիսուս գիտեց զոյն պահ մը և ապա դառնալով մեզ՝ ըստ։

— Ուշ է արդէն, հանգէկցէք ձեր անկողիններուն և ունեցէք Աստուծոյ այցը ձեր հանգիստին մէջ։ Ես հոս, այս արիշին տակ պիտի ըլլամ մինչեւ այգարաց։ Այսօր իմ ուսկանովս երկու անձեր բռնած եմ և այդ իմ գերագոյն գոհացումս է։ Զեզի բարի գիշեր կը մաղթեմ։

Ապա զոքանչս ըստ։

— Տէր, տան մէջ պատրաստած ենք քու անկողինդ, խնդրեմ, ներս հրամմէ և հանդստացիր։

— Ես իրապէս պիտի հանգստանամ — ըստ Յիսուս — բայց ոչ թէ տունէն ներս։ Թողէք որ այս գիշեր ննջեմ աստղերու և արիշի խաղաղներու հովանիին։

Ապա թողուցինք զինքը արիշին տակ և ներս մտանք։ Աղջիկս վերջինն էր որ հետեւցաւ մեզի, տակաւին պահելով հիանիկ իր աչուկները Անոր վրայ։

Այս կերպով էր որ առաջին անգամ ես ճանչցայ իմ Տէրս և Վարդապետս, ու տարիներ վերջ, տակաւին կը զգամ թէ պատահածը այսօր էր կարծես։

ԽԱԼԻԼ ՃԻՊՐԱԽ

## Ա. Ն Զ Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Բնութիւնն ամբողջ,  
Եւ երաշգեղ, լոյծ զայտնիներով,  
Հոդի ընդերքի ոսկի աւազով,  
Լեռներ ու դաշտեր, անտառներ մըրին,  
Ժայռներն վազող ջուրերը արծաթ,  
Արեւէն յրդի սարսուոր սերմին,  
Ծառերէն կախուած կանթեղմերու պէս  
Միրզեր գոյնօգոյնն,  
Կամ այցիներու ողկոյզներն դեղձան,  
Սալոր, թըրենին, մեսախ դեղձենին,  
Կարմրահիր բոցով երգող ծիրանին,  
Խմած արեւի երաքարք զինին,  
Խնձի չեն խօսիր:

Գարուններու քարմ բայլերուն ներմեւ,  
Շոլով ու շաղով վարդերու շուրջին՝  
Երգող սփակներ,  
Եւ ցորեններու բոցերու մէջէն  
Թոշող արտոյններ,  
Ջեմ արեւներու համբոյրով օծուն,  
Խնձի չեն խօսիր:

Դարերէն եկած վէպն ու առասպել,  
Գետերու նման արծաթ հոսանքով,  
Որոնք ընեւ են հունը պատմութեան  
Փարքամ մեր ցեղին,  
Որոնց խորառունց բոցերն կայծկլտուն  
Դեռ կը սարսրուան խորն հոգիններուն,  
Խնձի չեն խօսիր:

Ա. Ա. Վերէն կախուած կախարդանն անեարժ  
Մեր բիւր սարերուն,  
Լեռը սրբազն Հայոց աշխարհին,  
Որու զազաքին՝ ամէն առաւած  
Կը դընէ արեւն իր քազը ոսկի,  
Միծ արաշչոքեան աներքունէ աղօք,  
Հայոց հէմեաքի ակը մշայորդ,  
Բընութեան հրաւաք՝  
Որուն կողերէն մանեակն է սատափ

Պարը հայլական,  
Արուն ծիծերէն քափող մետաղի  
Կարիլներ հալած,  
Խնձի չեն խօսիր:

Մարդի ու Արարիշ զուր կը պայմարին,  
Խրացնելու ինչ որ պէտք էր ըլլար,  
Վերածելու մեր զուրը զինիի  
Դաշխուրանին մէջ մեր այս աշխարհին,  
Խնձի չեն խօսիր:

Ունայն են նոյնպէս սէրեն առօրեայ,  
Հանոյնները սին մարդիրու պանդոյր,  
Ճահիճը մեղին եւ կեղծիններու,  
Խնձի չեն խօսիր:  
Մարդերը բոլոր, բարեկամ կարծուած,  
Լոկ իրենց հասուոյն կ'ապրին, կը խորհին,  
Նենց ու չարակամ քենամինեւ են,  
Իրենց բարիքը լոկ նետապնդող,  
Նման որսորդին որ կ'որսայ միայն  
Խնձինքին համար:

Ոչ խորհրդագեղ տանարներ ըրբեղ,  
Նեղոսէն Աքէնք,  
Խրենց զեղեցիկ եւ խորախարիսխ  
Ուսերով ողորփիւր.  
Գմբէթինեն ոռոնց ըշուած զլուխներ  
Մարմինէն անջատ,  
Գեռ կը յամառին տաղուարելու  
Կոմարներուն տակ իրենց իմիկաբոյր,  
Լացն ու աղօքքը մարդիրուն բոլոր,  
Մողած Արարին, կայլակը անհուն  
Մեր այս աշխարհին,  
Խնձի չեն խօսիր:

Կամ Զուարբոցի տանար լսեմ  
Եւ անկրկնելի,  
Զոյգ արծիները խոյացող վերեւ,  
Ցցած գմբէթն իր Մասիսի դիմաց,  
Աղօքքի կիցած,  
Որուն որմերուն նուռերը կանքեղ,

Ողկոյզներ շարան,  
Հիւսելով հըրացն Հայոց արուեստին,  
Որոն օծումին ներկայ է եղած  
Կոստանդիանոսը, Հռոմը զոռոզ,  
Նախանձեն պաղած աչերով անկայժ,  
Ինձի չեն խօսիր:

Յոգներ եմ կեանին,  
Առանց ուզելու մահը ամենի:  
Չունիմ ո՞չ մորմով եւ ոչ մղջաւանչ,  
Կեանիք ի՞նչ կու տայ այս աշխարհի մէջ  
Պատառ մ'հացէն զա, բցուած արցունեով:

Չեռք մը ծանր ու մութ,  
Գոցեր է սրշի դարպաներն ամէն,  
Երազներս վառ, իղձերս կրակ,  
Դեռ մինչեւ երեկ այնքան գեղեցիկ  
Եւ այնքան պայծառ,  
Անձեւը ոսկի՝ երկինքն քափուող:

Յաւ կայ սրշի մէջ,  
Վայրկեաններ՝ որոնք դարերու նման  
Լուռ կը յամենան:  
Ոչ յուսն անցեալին, ոչ յոյսը վաղուան  
Ամոնել կրնան վէրքն իր լայնաբաց:  
Շուրջս ամէն ինչ ծփուն ու տարտամ  
Եւ անիրական:

Մարդերը ծանօթ բայց դիմակափոխ,  
Շուներու նման կ'անցնին ու կ'երթան,  
Որոնց համար ես դեռ մինչեւ երեկ  
Կ'երթայի վիճել ծաղիկներ ներմակ:

Ինկած է մուսև աչըրներէն իմ,  
Այժմ զիսեն թէ մարդն է չարակամ,  
Մահած ինքզինքը նիւթին ու փառքին,  
Սողացող որդը մեր այս աշխարհին,  
Պղծելով այսպէս դեռ անպղծելին:

Կը զզամ թէ տակաւ մէջս կ'արքննայ  
Մարդը անծանօթ,  
Տարիներ երկար ներսը ողբայուած,  
Երբներուն ծիծաղ եւ ատելութիւն:

+

Տէր, մի՛ սրտեղից այս բաածներուս՝  
Աշխարհն դեռ լին է Կայիափաներով,  
Սուրակասպաս եւ Սիմոնական,  
Եւ Ցուգաներով արծաքածսրաւ,  
Պիղատոսներով արդարավանառ,  
Որոնք տակաւին կը փորձեն լուալ  
Զեռքերն իրենց պիղծ, ոճիրներ հոտող:

Հոս են տակաւին Թովմասն ու Պետրոս,  
Մին կասկածամիս, միւսն ուրացող:  
Կասկած ու հաւաք երկուորեակներ են,  
Երբեմն ոխերիմ, երբեմն հաւըուած,  
Եքէ կարենան մատները իրենց  
Խըրել անվարան,  
Իրենց սրտերու վէրքերուն մէջ խոր:

Մայրդ տակաւին, անհուն Խաչեցեալ,  
Կ'օրօք նորէն իր թեւերուն մէջ  
Մանկութիւնդ նըրաց:  
Մազդակենացին, ան որ ճաւակեց  
Քացախը լեղի եւ ապա զինին,  
Բաժակէդ ոսկի,  
Կեցած է նորէն խաչիդ առընթեր,  
Խորն աչւըներուն՝ սիրեր արցունիի,  
Չըրափուած սիրոյ:  
Միակ ըրբունին պոռմիկներու մէջ  
Մեր այս աշխարհին,  
Որուն սփենքին չիջան կարիլներ  
Մարդոց ըրբներուն՝  
Ընելու զիրենք օձեր քունաւոր:

ԵՂԻՎ.Ա.ՐԴ

## Ն Ե Ս Ի Խ Ն Դ Ի Շ Ա Ր Ա Կ Ա Ն

ԺՈՂՈՎՈՒՅՑ ՄԵՇ ԵՒ ԹԻԱՆՀԵԼԻՀ»

Գիշերն խաղաղ է: Ցայգանդար վընիս:  
Երկինքն՝ աստղեր համբոյր ու ժրապիս  
Կը ծուեն երկիր, կը ցողեն նոր լոյս,  
Մութ հոգիներու վրայ ուղիկորոյս:

Լուսանգարդ՝ պայծառ ու լուռ է գիշեր.  
Լոյսի հազար ողջ՝ խայտան մութ դաշտեր,  
Ուր պարզ հովիւսեր՝ երկին տակ անհուն,  
Կ'արածեն հօսը իրենց գառներուն:

Գիշերը խունի է ու բոյր ռեժիսույթն.  
Պակուցեալ աշեր՝ հօն, վեր կը նային:  
Զայներ կը լուսին մութին խորեւեն,  
Մինչ երկիր երկինք՝ հանդար կը նիրեն:

Գիշերը ո՞ւրք է, գիշերն՝ գորովոս.  
Վար՝ հովիւսեր եւ անմեղ զառանց հօս,  
Վերը՝ երեսակաց բազմութիւն մ'անթիւ  
Կը տաղերգեն նոր Ասդի մ'ի պատիւ

Փառքի համերգը, մեղմիկ քաղցրութեամբ.  
Երբ բարձունեներէն կ'իջնէ ամայ առ ամայ,  
Նորահրաւ լոյսը, իր ողջովլ մահուր  
Բազմիլ մութ Այրին, յանբանից մըսուր:

Ա՞նուրք գիշեր, լուսեղ գիշեր սրբադէմ,  
Հոգիներու վրայ բացուած նո՞ր եղիմ:  
Ա. Ժիարեն՝ լոյսիդ ողիւներուն մէջ  
Պիտի գտնէ օր մ'իր հաւատն անտէջ,

Բոցանիս փալմամբ խաչին քառարեւ,  
Որ սկսակնածէն իրեւ նոր արեւ,  
Գողգորայի մութ եւ անսուն սարէն  
Պիտի նուովէ մեզ աննսուորէն:

Ա. Ասդազիր մատեան եւ լոյսի խորհուրդ՝  
Ա. Աստածոյ ժրապիսն է գիշերն այս լուրք,  
Որ կ'իջնէ վերէն երկրի վրայ, ուր  
Հեթևակաց ձայնը հնչէ դաշնալուր.

## ԾԵՐԱՆՈՑԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Տարիքուներ, այր թէ կին, հաւաքուած են վերստին  
Ներանցի մատրան մէջ, ուր Խուրը Մարմինն Միածնին  
Իր Արևան նես — մեծ խորհուրդ — կը բաշխը անխսիր,  
Վիշտն խոցուած Տիրամօր նկարին տակ մեծադիր:

Անոնց պէս ես ալ մի օր — որ հեռու չէ, կը կարծեմ — ,  
Աշխարհին նես արտաքին պիտի հափին իմ փակեմ.  
Տարիներու բեռան նես բերած կծիկն յուշերուս,  
Պի՛ս միանամ մարդերուն այս անտեսիլ ու անյօյս:

Ընկերներուս նես փակած ամէն հաւել՝ պիտի զամ,  
Այս անդրբին մէջ պիտի հիւանդ խոներս որոնամ,  
Վերջին էջերը, այո, կեանիս գրքին բազմազոյն,  
Հոս պի՛ս գրեմ, անոնց մէջ բափեմ մրուրն իմ հոգւոյն:

Մահուան անձոյժ նրեւակին է՛ն տա սիրած տեղն է հոն,  
Կեանին մէնոս հոգիներ ուր մերը իրեն կը սպասեն.  
Հոն է ուր ես անցընեմ պի՛ս իմ կեանիի երեկոն,  
Եւ օրէ օր մօսեցող իր ոռնաձայնը լսեմ:

Գերադաս չէ՛ արդեօֆ մահն անակնկալ, կանխահաս,  
Քան ձիգ ու սեւ օրերուն՝ բամել հոգիդ մաս առ մաս.  
Հարցումներուն այս չունիմ ես պատասխան մը մեկին,  
Ընտրութիւնն այդ; Տէր, լաւ որ Գուն չես ձգած մեր կամքին:

Տէր, չպակսի բող ինձմէ ուրախութիւնը անհուն,  
Մեղմի բեռէն բերեցած սիրս մը իմ մէջ կրելսն:

2.2.1985

Գ. ՃԱՐՏԱՐ

«Փա՛ռք յաւերժոկան անտես բարձունքին,  
Եւ խաղաղութիւն, հանութիւն կրկին  
Բոլոր աշխարհին, եւ մարդկանց անուս,  
Եւ օհնութիւն Քեզ, Տէր, միւս ի բարձունք:

Հիշեցէ՛ զանգեր, ձայնով անկակիծ,  
Մեծ խորհուրդը, զի Հայրն յաւիտենից  
Բառնալու համար ամէն վիշտ ու ցաւ,  
Մարմնացեալ՝ այսօր ի մեզ յայտնեցաւ:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵՍԱՆ

## Հիւ ՅՈՒՇԵՐ

### ՆԱՄՈԿԱՆԻ Կ ՊԱԼԵՈՅ Տ. ԶՈՒԷՆ ՊԼՏՏԻՈՐՔԻ

«Սիօն»ի այս թիւէն սկսալ, երառակարիքան կու առն և. Պոլսոյ նախկին Պատրիարք-Եպիսկոպոս Հայէն Արքիպատրիք Առաջային նամակները՝ ուղղուած Աւելանի նպա. Դուրեւանի, (նաևազային նախառակ Առաջարար Ամերիկանացոց), ու այդ առն կը զօնուէ Պուլիարիա: Գուած են անսն հագուածակներու մեր պատրիքան ամսէն դառն ու Ցինամանային ուրեւն: Մրանմիկ կողերով համ կ'արայայաւի այրադ վիշը իւ հօփն անինումին գիմաց առյուղը՝ բայց կազուրիան գարման մը գանձու կարալութեէն գրիւած բարի Հովուապեի սրբին: Ջեւազիր կը մնար Ս. Արքուոյ Փիւանաւան բրածաւաներուն մէշ՝ անիպ: Սոյն գրաբինը հարազա բնագրէն ընդօրինակած է Նազարէ Պ. Զափառաւան:

ԽՄԲ.

ՊԱՐԵՒՅԹԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կառանդնուազոլիս, 25 Մայիս/7 Յունիս, 1915

Համար ...

Գերապատիւ

Տ. Ղևոնդ Ա. Եպիսկոպոս Դուրեւան

ի Ֆիլիպպէ

Թուրքիոյ Հայութիւնը գորերէ ի վեր չտեսնուած տագնապ մը կ'անցընէ այժմ. Համբատական շրջանին սառւեր բերող շրջանի մը մէջ կը գանուինք, բանտարկութիւնք, կողոպուտք, գիւղերու աբերում, սպանութիւնք՝ հայաբնակ բոլոր գտառուներու մէջ, և ընդհանուր կոտարածներու փոխարէն ընդհանուր տարսութումներ: Անշուշտ փոքր ի շատէ իմացած էք ցարդ մեր ժողովրդեան գլխուն եկածները, այս պատճառու կ'ուզեմ օգտուիլ մեր դիրքէն, թերես դարձան մը կարելի ըլլայ առանիլ այս զարհութելի կացութեան: Վեհ. Կաթողիկոսին չեմ ուզեր ուղղուկի բան մը գրել, զի մի գուցէ գրութիւնս թուս կառավարութեան ձեռք անցնելով՝ հրատարակութեան տրուի և անող մեր ժողովուրդին վիճակը աւելի դառնանայ: Այս պատճառու այսուհետեւ երբեմն Զեղի պիտի գրեմ, որպէսզի դուք ալ իրեւ սոյզ ալիքիւր քաղուած հաղորդէք նորին Ս. Օծութեան կաթողիկոսին և անոր օժանդակութիւն ընացեք:

Ապրիլի սկիզբը Վանայ դէպքը տեղի ունեցաւ, որ առիթ տուաւ կառավարութեան քաղաքին հայ թաղերը ուժակոծելով 300 տունի չափ մոխիր զարձնելու և 5-600 մարդ սպաննելու: Քիչ յետոյ տեղի ունեցաւ այդ քաղաքին ուռւական գրաւումը և Հայոց ձեռքով տեղույն իրամերէն սմանց կոտորումը: Այս գէպքերուն մանրամասնութիւնը ծանօթ չէ մեզի, սակայն Ապրիլ 10էն ետքը կառավորութեան քաղաքականութեան փոփոխումն և Հայոց հանդէպ ի գործ դրուած խստութեանց պատճառը Վանայ մէջ Հայոց այդպիսի ընթացք ունենալով է պատասխանուեցաւ մեզի նախարարներէն: Այդ թուականին՝ կեդրոնէն արտաւած հրամանի մը վրայ Թուրքիոյ ամէն կողմը խուզարկուեցան բազմաթիւ Հայոց տուներ, չինոյելով նոյնիսկ առաջնորդարան, հեկեղեցի և գլորժարան, հազարաւոր անձեր ձերքաւ կուռեցան, չէնք, վասակար գիրք, պատկեր, ևն. ունենալուն պատճառու: Ասէք զատ, առանց որոշ յանցանքի, գրեթէ ամէն քաղաքէ և գիւղէ իսլամարնակ վայրեր աքարուեցան հազարաւոր երկելի հայեր, եկեղեցականներ, մտաւրականներ, հա-

րուստներ և կուսակցականներ կամ անոնց հետ շփում ունեցող անհատներ, Պոլիսէն 250էն աւելի անձեր աքսորուեցան Զանդրի (Բասթէմոնի նահանգ) և Այշշ (Գաղտատիս), բայց գաւառներուն աքսորականները աւելի շատ են թուով, Պոլսոյ հետ բազդատելով, Ասիկո որոշ ծրագրի մը արդիւնքն է, Հայութիւնը նախ զինաթափ ընել և գլխաւորները աքսորելով ահօքրեկել, ապա ազգը ամբողջովին փացնելի 20-45 տարեկանները արդէն զէնքի տակ են, միւսները այս կերպով չէղոքացնելէ յետոյ, մեացած կիներուն ու փաքրիկներուն գլխուն եղերերդութիւն մը խաղալու Այս եղերերդութիւնը կամ գժոխային ծրագիրը հետեւելուն է. Հայկական ինդիրը միանգամբ ընդմիշտ վերջացնելու համար, հայարնակ վեց նահանգներուն հայութիւնը մեծ ժամանք գէպի հարու փոխադրել, Միջադեպի այն մասը, որ կը գտնուի Հայ լէպի և Մուսուլի միջն, և ար կը բնուկին այժմ Արար և Քիւրդ աշկիրաթները Այս ծրագիրը գործադրելու պաշտօն ունեցող յանձնամոլովը արդէն ընտրուած ու ճամփարաց ելուծ է, և կը կործնիք թէ երե ժողովուրդին տեղափոխումը չէ սկսած տակաւին, շատ քիչ օրէն պիտի սկսի, թէն կը կարծենք թէ վանայ ոչ գրաւեալ տեղերուն և Բաղէշի Հայ բնակչութիւնը սկսած են արդէն ճամբար հանելու Այլևս երեակայեցէք թէ ի՞նչ պիտի ըլլայ անոնց վիճակը, քանի որ ոչ միայն իրենց կալուածները պիտի ձգեն, այլև իրենց ցանքերն ու բոլոր գոյզերը Անշուշա քանի մը ամսաւան մէջ պիտի կոտորուին անօթութեան և անընտել կիմայի երեսէն. Օրինակը մեր աշքին աշջեն է արդէն. Զէյթունի և շրջակայից Հայութիւնը, ինչպէս անշուշտ իմացած էք, այժմ ամբողջովին տեղափոխուած է, մէկ մասը Հայէպէն անդին Զօր գաւառող իսկ միւսը (իբր 1000 ընտանիք) Գոնիայի Սուլթանիէ գրեզաքաղաքը, ուր կը մեան այսօք մերի, անօթի և անպատճապար: Տնզը ճախճախուած ըլլալով, համաճարակ հիւանդութիւնք արդէն սկսած են արդէն կոտորածներ ընել անոնց մէջ, Ասոնց հետ յարաբերութեան մտնելու կամ անոնց օգնութիւն հասցնելու համար մեր ըրած բոլոր գիմումները անլսելի մեացին ցարդ: Իսկ անոնց գիւղերն ու կալուածները արդէն սկսած են յանձնուի իսլամներու՝ յատուկ յանձնամոլովի մը ձեռամբ:

Այս հեցեցք թէ այս հայաջինջ քաղաքականութիւնը որչափ եանը պիտի կը ու մեզի և որքան պիտի վտանգէ մեր ազգին գոյութիւնը. ուստի ջանացէք փութով հարկ եղած տեղերը դիմել և տառչքն առնելու միջացները հայթայթելի վեհ. Կարպուկոսին և Ամերիկայի տռաջնորդին գրեցէք: Մեր բոլոր միջացները սպառած են, մեր դիմումները անլսելի կը մնան, իսկ մայրաքաղաքիս մէջ գտնուող գենսպաններէն միայն Ամերիկան և Պուլկարական դեսպաններն են որ մեզմով կը գրազին և մեր գառն կացութիւնը մեզմացնելու կ'աշխատին: Ասոնց ջանքերը ո'րչափ ալ երախտագիտութեան արժանի են, սակայն, կործեն չեն բաւեր վտանգը հեռացնելու, ցարչափ Թուրք կառավարութիւնը գարողներուն վրայ ճնշիչ միջոց մը չգործադրուի: Հոս գտնուող միւս դեսպաններէն Գերմանիական ու Աւստրիականը իրենց ամենազօրութեամբ բոլորովին անտարբեր են մեր ցաւերուն:

Այս նամակը գաղտնի միջոցով մը կը զրկեմ Զեզի, Զեր նամակներէն մէկուն մէջ միայն Զեզի հասած ըլլալը ակնարկնեցէք.

Եղբայրական ողջամիւ,  
Գարբիարք Հայոց Թուրքիայ  
ԶԱԻԿՆ ԱՐՔԵՊԱ. Տէ՛՛ ԵՂԱՄԱՑԵԱՆ

## ՊԱՏՐԻԱՐԿԱԹՈՆ ՀԱՅՈՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՆ  
Patriarcat ARMENIEN  
CONSTANTINOPLE

*Հ*

Գիրապահիւ

Տ. Ղևոնդ Եպիսկոպոս Դուռիան

Constantinople, le 20 Յունիս/13 Յուլիս, 1915

Ֆիլիպպէ

Մայիս 25էն ի վեր, գէպքերը գահավիժօրէն իրար յաջորդեցին և ազգին զիմակը իր գառնագոյն և թշուառագոյն աստիճանին հասաւ Մինչ այն օրը միայն կիրկուոյ քոնի մը քաղաքներու և գիւղերու ժողովրդեան բռնի տարագրումը գիտէինք, իսկ Կարնոյ մասին շշուկներ միայն հասած էին մեզի այսօր առուգապէս գիտենք, թէ կիրկուոյ բալոր քաղաքներու և գիւղերու Հայ ժողովուրդը ամբողջին տրդէն տեղանան եղած է և Հայէպի հարաւային անապատները բջուած, Կարնոյ ժողովուրդը Մայիս 1էն ի վեց տաս ամբողջ մահանգը, և հետզիւտէ ձամբայ հանուած են Սամսոնէն ու Կեսարիայէն ակսեալ մինչեւ Տիգրանակերու և եղեսիա, մէջն ըլլալով Տրապիզոնի, Սերամիոյ, Խորբերդի, Բաղչէի, Վանոյ և Տիգրանակերու ամբողջ Հայութիւնը, մէծէն մինչեւ պատիկ, առանց մէկ մարզ իսկ թողլու, և քուած գէպի Միջագետնեան անապատները, Հայէպի հարաւային կողմերէն մինչեւ Մոսուլ և Պաղաստան Հայաստան առանց Հայութ, այդ է Օսմ. կառագառութեան ծրագիրը, Եւ արդէն սկսուած է Հայոց հոգերուն և առուերուն մէջ իստամեր բնակեցնելի Հարկ չկայ ըսկու որ տարագրուուզները գրեթէ ոչ մէկ բան կրնան առնել իրենց հետ, կռավարութեան կողմէ թոյլ չտրուելուն պատճառաւ, և արդէն փոխադրութեան միջոց ալ չէ մնացնը այդ գաւառներու մէջ, քանի որ զինուորակոն իշխանութիւնը ամբողջին գրաւած է զանոնք: Հայ գաղթականները պարտար են մէկէն երկու ամիս և տեկի հետիւն ճամբորդել, հասնելու համար անապատի այս անկիւնը, որ սրոշուած է անոնց գերեզման ըլլալու: Արդէն լուրեր կը հասնին թէ ճամբուն երկոյնքը և Եփրատի ջուրերը լեցուն են գիտներով այն թշուած գոյթականներուն, որոնց մնացորդներն ալ անապատներու մէջ հետզիւտէ մեռնելու գաւառաբառուած են, ո՛չ բնակարան, ո՛չ տշխատութեան միջոց և ո՛չ ապրուստ աւնենալուն պատճառաւ: Հայութիւնը ամբողջին բնացինչ ընելու ծրագիր մըն է այս: Պէտք է դիտնալ թէ 20-45 տարեկանները զէնքի տակ առնուելէ յետոյ, 15-20 և 45-60 տարեկան առուներն ալ զինուորական պէտքերու փոխագրութեան համար վար դրուած են: Պէտք տուղներն զանազան աեղեր աքսորուած գամ այլ կայեալ պատճառներով բնատարկուած են, հետեարար Հայ գաղթականները կը ճամբորդեն միայն, ծեր, կին և մանուկ ունենալով, և այնպիսի տեղերէ պիտի անցնին, ուր խաղաղութեան ժամանակ անդամ տրանց կողովառուելու կամ ավանաւելու կարելի չէր անցնիլ: Թուրք չէթէներն և այլ աւազակները, ու նոյնիսկ ժանտարմերն ու կռավարութեան պաշտօնեանները զանոնք կուղակելու, կիներն ու աղջիկները բռնաբարելու և առեանդելու համար ազատորէն կը գործնի: Զանազան տեղերէ իսլամացումներու լուրեր ալ կը հասնին մեզի, Կ'երսի թէ ժողովուրդը իր կեանքը փրկելու տարրեր միջոց չունի:

